

ՄԱՍԻՍ

ԺԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

55ՐԴ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 33

11 ՕԳՈՍՏՈՍ 1907

Ի ՈՎ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն Ը

Կրթական հանձն

Այլակերպություն

Եկեղեցի

Լամարթինի

Մոլորում

Շօթեն :

Ծերունիներ

Անհատ Լիսթենգելերի

Գրագետներու ճաշողությունը

Հին եւ Նոր Հայերենը

(Պատասխան Նարանեանի)

Նայումները

«Սիրոյ Զոհը»

Էջ մը Եփրայական Փիլիսոփայության

Պատմություն

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆ

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

ՊԵՐՃՈՒՀԻ ԵԱԶԸՃԵԱՆ

ՄԱՆՆԻԿ Ռ. ՊԵՐՊԷՐԵԱՆ

ՏՕՄԻՆՕ

ԱՐՄԵՆԱԿ ԻՆՃԷԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՍՈՒՐԷՆ ԱՍՈՒՐԵԱՆ

ԴԱՆԻԷԼ ՆՇԱՆԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԱՆ

1907



CHURCH OF THE

REDEMPTION

OF THE

REDEMPTION

OF THE

REDEMPTION

OF THE

REDEMPTION

OF THE

REDEMPTION

OF THE

REDEMPTION

OF THE

REDEMPTION

OF THE

REDEMPTION

OF THE

REDEMPTION

OF THE

ԱՐԵՒԵԼՔԻ ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆադաֆական.—

Բաժանորդագրութիւն Կ. Պոլսոյ համար 80 շրջ., գաւառներու համար 108 շրջ. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Ձեռքէ վաճառում՝ ջաւը փարա: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանաօ փողոց: ԱՐԵՒԵԼՔԻ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով: ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներով առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւուր աւելի՛ հրապուրիչ դառնալով՝ նորանոր բարեփոխներու շնորհիւ, զորս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ԸՂԱՅԻՆ հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար Մանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական ևայլն, բացի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթ Նօթերէ, որոնք նիւթերու ճոխ պէսպիսութիւն մը կը կազմեն:

Եղիա Տէմիրճիպաշեանի Հայերէնէ-Ֆրանսերէն Բառարանը, որ գեղեցիկ աշխատութիւն մը և ամէն անհատի անհրաժեշտ Բառագիրք մըն է, կը գտնուի ծանօթ գրավաճառ Զարեհ Էֆ. Թորոսեանի քով, (Պոլիս, Պահլէ Գաբու, Բասըմ Բաշա Խան) որուն կրնան դիմել Բառարանին՝ (շինը 15 շրջ. փօթի ծախքով 16¹/₂) ինչպէս գրեական ամէն տեսակ յանձնարարութիւններու համար, խզճամիտ գրավաճառի մը հետ գործունենալու վստահութեամբ:— Իր հրատարակութիւնն է նաև Դպրոցի Դիրքը դասագիրքերու շարքը, որ միակն է կանոնաւոր մէթոտով մը ընթացող՝ նախակրթական դասընթացքի շրջանին համաձայն:

ԵՐԿՈՒ ԿԱՐԵՒՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՆՁԵՐՈՒ ԹՇՆԱՄԻՆ՝ գրած է Տօքթ. Յովս. Տ. Ստեփանեան մասնաւորապէս ծնողքներու և դաստիարակներու համար, որոնք կը փափաքին գիտնալ թէ ինչպէս կարելի է օգտակարապէս խօսիլ մանչերու, իրենց տարիքին յատուկ եղող մոլութեան վրայ և անկէ զգուշացնել զանոնք: Կատարեալ դեղագիր մըն է այս գրքոյկը՝ գիշութեան դէմ: Դինը 5 շրջուշ:

ՄԱՆՁԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄԸ՝ կը խօսի մանչերու յատուկ մոլութեան վրայ բոլոր իսկ մանչերուն, որպէս զի անոր բնութիւնը և վտանգաւորութիւնը հասկնան նոյն իսկ իրենք ու կամովին հրաժարին անկէ: Անգլիացի ընթերցողներէ ա՛յնքան համակրութիւն վայելող այս գրքոյկը հայերէնի թարգմանած է Տօքթ. Յովս. Տ. Ստեփանեան հայ պատանիներու ծառայութիւն մը մատուցանելու համար: Բացարձակապէս վստահելի ու անօրինակ կերպով աժան — լոկ 40 փարա — որպէս զի մատչելի ըլլայ ամէն մանչու: Կեդրոնատեղին՝ Պալենց Դրատուն, Կ. Պոլիս:

«ՄԱՍԻՍ»-Ի ՀԱՐՅՈՒՄԸ

Մասիսի զուարթ հարցումներէն գաւառացի ընթերցողներուն ուղ-
ղուած Ա. Հարցումին՝ Գաւառացի երիտասարդը պոչսեցի՝ թէ գաւառացի
աղջկան հետ կ'ուզէ ամուսնանալ եւ ինչո՞ւ, ստացուած պատասխաննե-
րէն կը հրատարակենք հետեւեալ ամէնէն կարճ եւ յաջողը, որուն տէրը
կը ստանայ Մասիսի Աւագոմ մը: — ՊԱՏԱՍԽԱՆ: Գաւառացի երիտասարդը
միշտ չրթունքները կը խածնէ պոչսեցի աղջկան մը ամուսինը ըլլալու
հրճունքին համար, բայց երբ կ'երեւակայէ պոչսեցիին պըրասիրութիւնը
եւ... այն տեսակ մը համարձակութիւնը՝ որ իր մանաւանդ գաւառացի
ամուսինին խրոտելակի մը դերը կուտայ, ձեռքերուն ոտքերուն ջուր
կ'իջնան ու չրթունքը խածնող լեզուն բերնէն ներս կը փախի:

ՍԱՀԱԿ ՃԻՒՀԻՐԵԱՆ

Հաճըն

Թ. ՀԱՐՅՈՒՄԻՆ: Տիկինը ծեր ամուսինէն կը պծայ ամեն կերպով,
ի՞նչ պէտք է ընէ, առանց մեղանչելու եւ խիղճը տանջելու՝ ստացուած
պատասխաններէն կը հրատարակենք հետեւեալ ամէնէն յաջողը, որուն
տէրը կը ստանայ իբր պարգև՝ 100 այցաբարտ՝ իր անունով:

ՊԱՏԱՍԽԱՆ. Տիկինն մեղանչելու եւ խիղճը տանջելու մասին ունե-
ցած ըմբռնումէն կախում ունի՝ ի՞նչ ընենք: Հիմա այնչափ առաձգա-
կան են այդ բացատրութիւնները, եւ... Գաւառացի անուանական խորհուրդն ալ
այնչափ... թոյլատու՝ որ կրնայ՝ Ալփիարի բացատրութիւնով՝ խաչ
դրացի մատղաշ երիտասարդի մը հետ... քով քովի, պայմանով որ
խիղճը... հետ չառնէ:

Գատի Գիւղ

Յ. ՍԱՐԱՅԵԱՆ

Բ. ՀԱՐՅՈՒՄ (Գաւառացի ընթերցողներուն). — Գաւառացի աղջիկը
պոչսեցի՝ թէ գաւառացի աղջկան հետ կ'ուզէ ամուսնանալ եւ ինչո՞ւ:
Պատասխանները՝ որոնք պէտք է կարճ եւ սրամիտ ըլլան՝ կ'ընդունուին
մինչեւ 25 Օգոստ. (Թ.): Յաջողագոյնը կը ստանայ Մասիսի Մատե-
նադարանին Ա. Հրատարակութիւնը, որ լոյս տեսած պիտի ըլլայ արդէն:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծնորհակալութեամբ ստացանք Ձեր բաժանորդագիրը եւ կը փութա-
ցնենք թերթերը. — Ն. Ս. Օծութիւն Ամեն. Հայոց Հայրապետ, Մր.
Հէրպէրթ Ալէն, Տեառք Վահան Թօթովենց, Սարգիս Բրուսեան, Կա-
րապետ Միրաքեան, Հայկազն Հապէշեան, Միհրան Գալայճեան, Յարու-
թիւն Նազարեան, Եղիա Նիկողոսեան, Կարապետ Էլպէկեան, Արշակ
Թուլումպաճեան, Յովհաննէս Բէլէշեան, Տիգրան Թապիպեան, Նշան
Ութէնճեան, Սերովբէ Դաւթեան, Գարեգին Փափաղեան, Բարսեղ
Վարդեան, Անտոն Սօմունճեան, Մանուկ Թախաճեան, Դառնիկ Յովհան-
կէօղեան, Միքայիլ Էլպէկեան, Մանուկ Պաղտատեան, Դառնիկ Յովհան-
նէսեան, Յակոբ Զպլազեան, Դանիէլ Ինճէան, Խաչիկ Անանիկ, Խաչիկ
Խաթանէսեան, Արշամ Զէրքէզեան, Գէորգ Զրտազեան, Աբիկ Զօրեան,
Զաքարիա Պղտիկեան, Լութֆիկ Խուպէսէրեան, Միսաք Մէյմարեան,
Շահպաղեան-Բէլէշեան, Յարութիւն Պէտէրեան, Սեպուհ Նաւասարդեան,
Մանուկ Դանիէլեան, Տօքթ. Պենոն Պէզազեան, Նշան Թորոսեան, Մա-
նուկ Զալըզեան, Մկրտիչ Գաբամաճեան, Յովսէփ Էքէեան, Տիկին Ա.
Ալիօթի եւ Իբրանոսեան Վարժարան:

ՄԱՍԻՍ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎԻՔ ԱՐՄԷՆ

55ԴՊ ՏԱՐԻ.ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 33

11 ՕԳՈՍՏՈՍ 1907

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

Տպագրական Տեսչութեան կողմէ, յունիս 20ին ստացանք հետեւեալ դադարման հրամանագիրը. —

Մասիս հայերէն շաբաթաթերթը կանոնի հակառակ ընթացքի մէջ գտնուիլ յանդգնած ըլլալուն՝ այսօրուէն անպայման կերպով դադարման ենթարկուած է:

Կնիք Տպագրական Տեսչութեան

Նոյն Տեսչութեան 4 օգոստ. թուակիր բարեհաճ հրամանը՝ արտօնեց Մասիսի վերաբացումը:

Վերսկսելու առիթով Մասիսի հրատարակութեան, մեր շնորհապարտ զգացումները կ'արտայայտենք ներքին Գործոց Նախարար Բարձր. Մէմ. տուհ ֓աշայի և Տպագրական Տեսուչ Վսեմ. Իէմալ Պէյի, որոնք Վեհ. Սուլթանին բարձր կամքին համաձայն, Օսմ. Մամուլին զարգացման և յառաջդիմութեան քաջալեր կը հանդիսանան միշտ:

ԿՐԹԱԿԱՆ ԲԵՄԵՐ

Եղանակը՝ որ անցաւ, առաւելագէտ դպրոցական եղանակն էր, որուն ընթացքին՝ ամենամեծ ոգեւորութեան մը տենդայոյզ անձկութիւնով՝ մեր կրթական յարկերը իրենց հնձաքաղը ըրին, հանրութեան ուշադրութեանը պարզելով իրենց որաները, իրարմէ քիչ կամ շատ բեղուն և իրարմէ քիչ կամ շատ փայլուն հասկերով։ Անոնցմէ կազմուած կալերուն մէջ ցուցադրութեան դրուած մեր թաղային վարժարաններու հունձքերը՝ իրենց միջակ որակով զերծ կը մնան մասնաւոր ուշադրութեան մը արժէքէն։ Անոնք իրերու ընական բերումով՝ այն խեղճուկ արտերն են՝ որոնք իրենց գլխուն ձգուած՝ կը պտղաբերեն այն միջակ ու ողորմելի հունձքը՝ ուր կորեկը առաւելակշիռ տեղը կը գրաւէ և աւաղախառն խանձած ցորենահատերը հազիւ կը զգացնեն իրենց գոյութիւնը, ընկճուելով ու անհետանալով ինքնածին վայրի բուսականութեան շեղձկոյտին տակ, որ կը համադրուէ ու կը կրնձէ արտին ճշմարիտ զաւակը։ Ինչ որ մեր մտաւորական դաշտի այդ հունձքէն արժանի է ուշադրութեան՝ պտուղն է մեր երկրորդական վարժարաններուն, ուր վարժ որ արժանաւոր մշակներու խնամքին տակ՝ կը հասնի աւելի ազնիւ ու խոստմնալից պտուղ մը։ Պէրպէրեանը և Կեդրոնականն են՝ որ առաջին տեղը կը գրաւեն այս կարգին մէջ, չհաշուելով օտար երկրորդական վարժարանները, որոնք իրենց ոչ-տոնային ընդթով՝ կը տարանջատուին այս դասակարգութենէն, թէև անոնց մէջ ալ կը հասնին հաւասար արժէքով և իմացական հաւասար օժիտներով պսակուած Հայ երիտասարդներ, ամէն կերպով կարող՝ դասուելու իրենց աստիճանակից պսակաւորներու դասին մէջ, և որոնք իբր Հայ կրթական հունձքին անդամներ՝ ոչինչով կ'անջատուին իրենց եղբայրակիցներէն, բացի զիրենք հովանաւորող կրթական յարկերու օտար անուանակոչութենէն։

Այդ կրթական յարկերը, իրենց հնձաքաղը հանրութեան ներկայացնելու առիթով, ունեցան հանդիսական ներկայացումներ, որոնք նկատելի շատ մը կողմեր կը պարզէին, խորհրդածութեան աւելի՛ արժանի, քան իրենց ծաղկեցուցած պտուղին որակական արժէքը, որ չդադրիր մշտնջենական մտածումը կազմելէ մեր կրթական գործով շահագրգռուողներուն։ Այսպէս, անոնք ունեցան իրենց առանձին հանդէսները, հանդիսաւոր ճոխ յայտագիրներով։ Հանրութիւնը ներկայ եղաւ, տեսաւ, վայելեց դանոնք, չլացած՝ երեւակայութիւնով բաժնուեցաւ, բայց թէ անոնք ո՛ր աստիճան գոհացուցիչ, չնորհալի ու բարեւայել ձեւի մը տակ կը ներկայացուէին, խնդիր մըն է, որ միշտ վրիպած է զանոնք կազմակերպողներուն ուշադրութենէն։ Այդ կէտն է ահա՝ զոր կ'ուզենք վեր հանել, ուշադրութիւնը հրաւիրելու համար անոր վրայ գոնէ վա-

րիչներուն մեր երկրորդական վարժարաններուն, որոնց մէջ գոյութիւնը նուիրագործուած թափթփածութիւններու՝ հիմնովին աններելի է։ Ամէն բանի մէջ եւրոպականը՝ կը հալածեն մերիները, եւրոպականին նմանողութեան վրայ կը կեդրոնացնեն իրենց մտածումը, բայց չեն կրնար եւրոպականացումի յետին շնորհքը մտցնել ա՛յն տեսակ կազմակերպութիւններու մէջ, ուր ամէնէն աւելի ծափելի պիտի դառնար եւրոպականին գոյութիւնը։ Ի՛նչ տեսակ հանդէսներ էին որ տեղի ունեցան մեր ամէնէն նշանակելի և միակ ալ երկրորդական վարժարաններուն՝ Պէրպէրեանի և Կեդրոնականի մէջ։ Թաղային վարժարաններու հանդիսութիւններուն յատուկ անկերպարան ու անանուն խառնակութիւն մը, ուր մտնողը ելլողը յայտնի չէ, և ուր փռապա մամիկներէ մինչեւ հազիւ ոտքի ելած զաւակնուն ձեռքէն բռնած անպաշտօն մայրեր, առանց հրաւերի և առանց կոչունքի մուտքի ինքնաստեղծ իրաւունքով յորդահոս կը խուժեն հանդիսասրահէն ներս, նոյն իսկ այն պահուն, երբ, օրինակի համար, Պէրպէրեանի արդի Տնօրէնը՝ գրաւուած է իր ընթերցումով իր «Հոսակ Բանք»ին կամ Տեղեկագիրին։ Եւ մինչ պէտք էր որ ամէն կերպով ջանք չխնայուէր, Պէրպէրեանի բացակայութեան դառնութիւնը չզգացնելու, իր կրթական սիրական յարկին այդ ամէնէն նշանակելի օրուան մէջ, անոր կորուստը և անհետացումը անգամ մըն ալ ու բռնի՝ կերպով կը շեշտուէր իր փոխանորդութեամբը խօսուած գրագիտապէս անիմաստ ու միջակ Տեղեկագիրի մը և «Հոսակ Բանք»ի մը մէջ, անարժան այն սէրին ու գուրգուրանքին, զոր այդ հանդիսաւոր ատենախօսութիւններուն յատկացուցած էր անոնց հեղինակ ողբացեալ դաստիարակը։

Կարգապահութեան խիստ աչքառու զանցառութիւններէ և անհեթեթութիւններէ զերծ չէր նաև Կեդրոնականը, որ իբր կրթական բարձրագոյն հաստատութիւն, իբր Ազգին երկրորդական կարեւոր վարժարանը, իբր collège, չներուիր որ հաւասարի նախակրթարաններու, անոնց մակարդակին իջնէ, իր հանդիսական կազմակերպութիւններուն մէջ։ Մինչ իմնամակալութեան անդամ — և ամէնէն յարգելի ու անձնուէր անդամներէն մէկը — Յակոբ Էֆ. Եսայեան Տեղեկագիրը կը կարդայ, չգադրիր դուռնէն խուժումը և հոսանքը անկոչ հանդիսականներու, սարէն ձորէն փութացող անանուն ու անծանօթ տիկիներու և օրիորդներու, որոնք կը մտնեն, անխոնջ կը մտնեն, հրմշտկելով ոտքի վրայ մնացողները, սխմրտուելով անոնց մէջ, առաջ անցնելու քրտնաջան ու չնչասպառ եռանդով։ Ու կը քալեն, կը հրմշտկեն, կը սխմրտուին, կ'առաջանան, իրարու ետեւէ անցնելով ատեանին առջեւէն, խափանելով ընթերցումը Տեղեկագիրին և յարուցանելով աղմուկ մը, շշնկոց մը, որ անխելի կը դարձնէ խօսուածը, կարդացուածը։ Ու հոսանքը չկասիր, վերջը չի՛ գար նոր ժամանողներուն, որոնք կը հասնին, կը փութան սրահ, կ'ըն-

դռնուի՛ն ալ և խառնակութիւնը, անկարգապահութիւնը, խառնիճա-
ղանճութիւնը կը տեսէ: Եւ ասիկա կեդրոնականի՛ հանդէսին մէջ: Ո՛վ
եւրոպականացում ու մօտեցում:

Օրէնք է որ, այս տեսակ հանդիսական կազմակերպութիւններու առի-
թով, Մուտքի Տոմսեր կը հանուին, որոնք սրահին բովանդակութեանը
չափով՝ կը ղրկուին պաշտօնական մարմիններու և ա՛յն տեսակ անձնա-
ւորութիւններու, որոնք պէտք է ներկայ ըլլան ու հրաւիրուին: Յար-
գելով այդ օրէնքը, կ'ընդունին մի՛այն հրաւիրագիրները ներկայացնող
անձերը, որով ո՛չ անկոչներ համարձակութիւն կ'ունենան ինքնահրաւէր
կերպով փութալու և ո՛չ ալ սրահը նեղ կուգայ հանդիսականներուն:
Այսչափ մը բանը զժուա՞ր է մտածել ու գործադրել, փրկելու համար
գո՛նէ կեդրոնական վարժարան մը՝ այն հայկական թափթիածութենէն
ու անկարգութենէն, որ յատկանիչն է մեր նախակրթական վարժարան-
ներուն: Ահա՛ թէ ո՛ւր պէտք է փնտռել օգտակար և անհրաժեշտ եւրո-
պականացումը: Ո՞ր օտար վարժարանին մէջ տեղի կ'ունենան այս տե-
սակ տհաճոյ տեսարաններ:

Ուրի՛շ նշանակելի պարագայ մըն ալ, որ նախապատմական ժամա-
նակներէ ժառանգուած աւանդութիւն մը ըլլալուն համար, չդադրիր
մեծապէս ծիծաղելի ըլլալէ: Ի՞նչ է այն ձեռք պագի արարողութիւնը,
զոր կը կատարեն մեր վարժարանները անխտիր: Մէկը որ ճառ մը խօսե-
ցաւ, մէկը որ վկայական պիտի ստանայ, տեսուչին կամ դաստիարակին
հրահանգին համաձայն, կանոնաւոր «ձեռք պագ»ի մը կ'ելլայ, որուն կը
հետեւին իր ընկերակիցները ստիպուած, ակամայ, ուզե՛ն կամ չուզեն:
Եւ ասիկա՝ ո՛չ թէ թաղային վարժարաններու մէջ, այլ Պէրպէրեանի և
կեդրոնականի՛ ալ մէջ, ուր մանկապարտէզի տղաք չեն որ ձեռք պագ-
նելու կ'ելլան, այլ պիտաւոր հասակաւոր ընթացաւարտներ: Հարմնցո՛ւ
են այդ երիտասարդները, և ի՞նչ տրամաբանութիւնով, ի՞նչ կենցաղա-
դիտութիւնով, եւրոպականացումի ո՞ր ըմբռնումով է որ հասակին պե-
խերնին տեղը ընթացաւարտներ կը մղեն ստիպողաբար ձեռք պագնելու,
մանկապարտէզի տղոց պէս, անգիտակից, անինքնաձանաչ մանուկներու
պէս: Անոնք երկրորդական վարժարանի մը ընթացաւարտներ են, իրենց
Եսը, Անհատականութիւնը, Ինքնագիտակցութիւնը և իրենց արժանիքին
ճանաչողութիւնը ունին, անոնք նրբացած Եսով ու զարգացած Անհա-
տականութիւնով collégiensներ են, և քանի մը կուրագնաց ոչխարամիտ-
ներու քով՝ կրնան գտնուիլ որոշ անձնականութիւնով ինքնագիտակից
հպարտ անհատականութիւններ, որոնք չուզեն հարմնցուի պէս ձեռք
պագնել, պարտաւորիչ ու ստիպողական կերպով: Ծառ խօսելուն և վկա-
յական առնելուն համար Ռօպրոդ Գօլըճի ընթացաւարտ մը Տօքթ. Ուօշ-
պըրնի կամ Տօքթ. Կէյթսի ձեռքը կը պագնէ: Ի՞նչ ըմբռնումով նուի-
րագործուեր է ու դեռ կը պահպանուի նախապատմական այս սովորու-

թիւնը մեր երկրորդական վարժարաններուն մէջ իսկ, անանկ ատեն մը, ուր մեր ամէն բանը եւրոպականացումի կը միտի, և անոր կաղապարին կ'ենթարկուի: Ուրիշ բան, երբ ընթացաւարտ մը կամ որ և է մէկը, մասնաւոր համակրութեամբ մը և սէրով մը՝ իր յարգանքին արտայայտութիւնը ինքնաբերաբար կ'ուզէ ձեռք պահելուն մէջ կեդրոնացնել, ինքնաբերաբար ու կաթողին խանդաղատանքով մատչելով ձեռքի մը:

Երբ կրթական հանդէսներու շուրջն է խօսքը, կարելի չէ զանց ընել պարագայ մըն ալ՝ դարձեալ «մեր» շրջանակէն, քանի որ Մխիթարեան Հայրերու վարժարաններն ալ, ծախելի ողջմտութիւնով մը, չեն ուզեր իրենց վարժարանները «մեր»իններէն անջատ ու «մեր»իններուն օտար հոչակել: Եթէ մեր երկրորդական երկու կարեւոր հաստատութիւնները, զերծ չէին իրենց հանդիսական կազմակերպութիւններուն մէջ՝ ուշադրաւ ու աններելի անկարգապահութիւններէ, Մխիթարեաններն ալ ուշադրաւ էին, եթէ ոչ ուրիշ բանով՝ գոնէ իրենց յայտագիրներով, անվերջանալի մասերով խճողուած իրենց յայամաուրքեան յայտագիրներով՝ ուր յայտնի ճիշդ կար, ուսանողներու եթէ ո'չ բոլորը, գոնէ կարելի՝ մեծամասնութիւնը անգամ մը բեմէն անցընելու, — տեսակ. մը դպրոցական *revue*, — բոլոր ծնողքներու ալ հպարտութիւնը և անձնասիրութիւնը գգուելու անիմաստ կանխամտածութիւնով: Ա՛ս է արդեօք գերմանական կրթական մեթոտը: Յետոյ, ինչպէս մեկնել նաև կրթական բեմի մը վրայ՝ գոյութիւնը... փայլացօնեալ, իրենց բոլոր թեթեւութեանը ու զուարճացուցիչ ծիծաղելիութեանը մէջ: Ա՛ս է արդեօք գերմանական կրթական մեթոտը, — զուարճալի ժամանցով մը ժողովրդական ճաշակը չլացնելու մոածո՞ւմն է:

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՄԱՍԻՍ, Ի ՎԵՐԱԲԱՑՈՒՄԻՆ ԱՌԻԹՈՎ

Մօսաւորապէս ամուսնացողներու մը ետք, կը վերսկսինք Մասիսի հրատարակութեան, խմբագրական ու վարչական նոյն ուղղութեամբ, հետապնդելով միշտ մեր ծրագրած գրական շարքը: Ինչպէս մինչեւ հիմա, ատկէ ետք ալ ջանք չպիտի խնայենք Մասիսի Գրական Շաբաթաբերքի արժանի իր անունին ու կոչումին մէջ ներկայացնելու, ձգտելով նոր կատարելագործութիւններու: Կը վստահինք թէ՛ ընթերցող ու բաժանորդ հասարակութիւնն ալ՝ որ սկիզբէն ջերմ համակրութեամբ մը ողջունեց մեր լրագրական այս ձեռնարկը, իր քաջալերութեան լաւագոյն ցայերք պիտի ձօնէ, առիթը եւ միջոցը տալով անոր՝ իր մասնաւորապէս եւ զաղափարականը կազմող զարգացումին տիրանալու: Եւ ասով թերթին հետեւ ինք հասարակութիւնն է որ պիտի շահի: Եթէ իւրաքանչիւր անհատ ուզէր նանչնալ թերթի մը զարգացումին օժանդակելու մասին իր ունեցած բարոյական պարտքը:

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Խոնջ ուղեղներու ֆունկե բազմախոտ՝
Ուր շատուերակերպ կրոնիչ կեանքին
Բունն ու խօշական ընդհարումներով
Ունա՛յն եզերու կը բաղիս ուժգին՝
Խոյս տրած երա՛գ մը շինջ կապուսակ
Պարտեց ա՛յսերն Առաքեալներուն,
Ու գՔեզ, ո՛վ Յիսուս, տեսն անպի թակ,
Այլակերպումի մը մէջ պորփխուն:



Վերջաշունային այն շառայներէն՝
Ուր անկածըստ վիժակներով նոր
Երկրէն հրական կը վարագուրեն
Իր առաքաւսին մէջ ցայգացքնոր՝
Ճամանջ մը փորքած աննիւթ՝ անծանօթ
Թափէր եր այն օր ծալի թակ մերմակ,
Ու բազմապատկած իր ցոյնն անաղօս
Փայլեցունց ճորճերդ ու մարմինդ հաւակ...
— Ի՛նչ արեւափառ, տո՛ւ եր այն Լոյսի,
Բայց Մեղիք մութին դարձաւ մեկունս:

Հին անխնկներու այն ֆունկանէն՝
Ուր դանդաղեալ անկ'ն ինչ կը բարաւե
Կաւ ուր հոգիներն յոյսեր կը կռակեն
Սալի մը վրայ դիրաքեկ կաւե՝
Երկուսն անոնցմէն այց տալով Քեզի
Կ'ուզէին խօսիլ լեզուով անբարբառ
Թե՛ մե՛ծ մարցանակ կար ապարեզի
Երբ մահը Բայովդ ընկնուէր ի սպառ...
— Ի՛նչ անմահաւոր տո՛ւ եր այն Կեանքի,
Բայց Մեղիք սիրեց փութը չբանփի:

Անտուր սիրտերու ամրոյս այն խորէն
Ուր գիտակցութեան շեշտն աչ կը մարի
Երբ յոռետեսի ծաղրակն կ'օրրեն
Բայքը ոճիւրին ու խեղճ յիմարի՝
Զայն մը ողջ գերծած կուրծփիլ թակ քրկորուն՝
Արձագանգեց զո՛ւր բարձրերն երկրնիս,
Անով զինքն «Հայր» դաւանեցաւ Իմն,
Ինքն աչ գՔեզ «Որդի» հրոյակեց կրկին...
— Ի՛նչ քեւարուսիկ տո՛ւ եր այն Խիղճի
Բայց Մեղիք յորճեց իբր անարգ մըճի:



Խոնջ ուղեղներու արթնութենէն խոտ՝
Ուր բուն իրական կրոնիւն աչ կեանքին
Բունն ու խօշական ընդհարումներով
Ունա՛յն եզերու կը բաղիս ուժգին՝
Դո՛ւրս քեր, ա՛հ, տեսի՛՛յ մը շինջ կապուսակ,
Ու հոգիս Լոյսիդ վաւմարձն ապահով
ԸՉե՛զ, ո՛վ Յիսուս, տեսն անպի թակ,
Կեանքի ու Խիղճի այլակերպումով:

ԵԶԻՐԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

ՍՈՒՆՈՐՈՒՄԸ

Գ.

Երկար ատեն խօսեցանք իր եղբորը վրայ և այս առիթով իմացայ որ Վահէ Վիեննա կը գտնուի այս միջոցիս և իր կնոջը հետ կը վարէ աշխարհիս ամէնէն հանդարտիկ և bourgeois կեանքը:

Ահաւասիկ, ես հոս կը տանջուիմ, կը տառապիմ. բոլոր էութիւնս կ'ըմբոստանայ և կատաղութենէս ինքզինքս կ'ուռեմ: Ու ան հոն, ան վրդով կ'ապրի, իր հրէշ կնոջը հետ, իբր թէ ամէն բան սովորական ձեւով մը եղած ըլլար: Ահ... Վահէ չափազանց ետասէր մըն է և վստահ եմ որ ինքզինքը չնեղելու համար իմ անունս անգամ պիտի վատարէ գլխէն... Միշտ ըսած էի արդէն թէ անախորժ զգայնութիւններէ կը զգուշանայ, ինչպէս պիտի զգուշանար դառն համ ունեցող բան մը բերանը դնելէ: Զարմանալի է որ հակառակ այս բաներուն և նոյն իսկ... այս բաներուն համար, զինքը կը սիրէի ու բոլոր էութիւնովս կը ցանկայի իրը ըլլալ, իր գերին, իր ձեռքին տակ խաղալիք մը: Վահէ այնքան ուժով էր իր ետասէր և անայլայլ նկարագիրին մէջ որ՝ նոյն այդ ուժին արտայայտութիւնէն կը չլանայի, կը հրապուրուէի, հոգիիս խորէն անդիմադրելի ձգտում մը զգալով դէպի իր սիրական և հպատակեցնող հրայրքը: Վահէ միակ անձն էր որ ինծի բացարձակ և անհաշիւ սէր ներշնչած էր և եթէ պզտիկ նշան մը ընէր ինծի՝ պիտի հետեւէի իրեն, նոյն իսկ ամէնէն վտանգաւոր և խորտուբորտ ճամբաներուն մէջ... Կը մտածեմ երբեմն. թերեւս բարիք մըն է իմ մօտէս հեռացած ըլլալը. բայց ճշմարտիւ, ի՞նչ բարիք, երբ անոր շնորհիւ կը տանջուիմ օրն ի բուն: Իր ներկայութիւնը ֆիզիքապէս անհրաժեշտ էր ինծի, իր աչքերուն հանդարտ և թափանցող նայուածքին տակ կ'ուզէի ընանալ երկար ատեն, ու հանգչիլ իր մօտութեանը գեղեցիկ ապահովութեանը մէջ. և երբ կը մտածեմ որ ալ բոլորովին անկարելի, անկարելի է ատիկա... ա՛հ իրաւ որ այն տեսակ շոգի մը կը բարձրանայ գլխուս մէջ՝ որ կարծես զիս պիտի խենթեցնէ:

Ի զո՛ւր երկար ատեն Արամին ձեռքը բռնեցի պինդ իմինիս մէջ. գոնէ տրոփում մը, գոնէ ամենադճոյզն զգայնութիւն մը ունենա՛ր իր եղբորմէն, որուն հետ նոյն հարազատ արիւնը կը կրէ. ի զուր նայեցայ աչքերուն խորը, պրպտեցի ամէնէն նրբին ճառագայթները իր նայուածքին, երկար ատեն զիտեցի իր դիմագիծերը, մէկիկ մէկիկ, Աստուածս, ի՞նչ ջերմեռանդութեամբ, ի՞նչ մեծ հրայրքով, խուզարկեցի բոլոր ծալքերը մորթին և բոլոր արտայայտութիւնները, չրթունքներուն գիծը ու բերանին անկիւնները. և, յուսահատական բան՝ ո՛չ մէկ, ո՛չ մէկ, ամենադճոյզն նմանութիւն մը. կարելի՞ բան է ասիկա, ինչպէ՞ս

կ'ըլլայ. իմ աչքերս են որ սխալ կը տեսնեն, թէ իր դէմքը չպարուած է նոր ու յանկարծական զգացումի մը արտայայտութեան մէջ: Ի՞նչ կ'ըլլար եթէ ունենար իր վրայ մէկ պղտիկ նմանութիւն մը՝ որ կարենային աչքերս հանգչիլ, ուր կարենային ապաստանիլ իմ կարօտակէզ և դառն ժամերուս, և այն ատեն, ապահովաբար, Արամի անձը սիրելի պիտի ըլլար ինծի, մի միայն ատոր համար:

Այս մտածումները կը գեղերէին մտքիս մէջ և Արամ ապշած իմ մասնաւոր ուշադրութենէս՝ չէր գիտեր ի՞նչ դիրք բռնել. հետզհետէ կը տփուկէր և երբեմն միայն ամպի պէս կարմրութիւններ կ'անցնէին ճակատին վրայէն. ձեռքիս մէջ կը զգայի իր ձեռքին պաղլիլը ու մատներուն դողդոջները...

Ի՞նչ բանի կը խորհէր ինքը, երբ ես կը ջանայի իր եղբորմէն նմանութիւն մը գտնել իր վրայ:

* *

Պատուհանիս առաջըը նստած ջղադրգիւ և տխուր՝ վարդեր կը թերթատէի. կէս թռուած վարդերու հոտը զարմանալի կերպով թելադրիչ է ինծի համար: Ո՞վ գիտէ ի՞նչ բան կը յիշեցնէ ինծի, յուզմունքի վայրկեան մը, թէ զուարթութեան պահ մը. երբեք չեմ կրցած հաստատել: Ինչ որ որոշապէս յայտնի է՝ տարտամ հաճոյքի զգայնութիւն մըն է, կարօտի և ցաւերու թեթեւ դառնութեամբ մը խառնուած:

Եւ ահաւասիկ, այս անգամ թարթիչներս կը խոնաւանան, և աւելի ուժգին քան երբեք՝ Վահէն կորսնցուցած ըլլալու ցաւը սիրտս կը խայթէ, օ՛հ, այն տեսակ անողոք սաստկութեամբ մը, որ միեւնոյն ատեն տենդի տագնապ մը կը պատճառէ ինծի: Զարմանալի արագութեամբ մը Վահէն յարաբերող շատ մը բաներ կ'անցնին միտքէս, իր շարժումները, իր ձեւերը, պարբերութիւններ, խօսք մը, նայուածքը և ամբողջ պարուրուած կը զգամ ինքզինքս իրմով, ամբողջովին գրաւուած, անկարող պայքարելու իր յիշատակին դէմ, ա՛հ...

Պարտէզին մէջ թուփերուն զազաթները կ'օրօրուն և մարդու սիւռէթ մը կը տեսնեմ, որ կռնակը դարձուցած ինծի՝ շարժում մը կ'ընէ. տերեւ մը կը բրցնէ, թերեւս ծաղիկ մը...: Գաղափարները կը խռնուին, կը կապկպուին, կը շիփթուին միտքիս մէջ. կոկորդս կարծես երկաթէ չրջանակի մը մէջ աստիճանաբար կը սեղմուի, աչքերս կը վարագուրուին արցունքներով. մարդը ինծի շատ ընտանի շարժումով մը ձեռքը գրպանին կը տանի... ա՛հ է.....

Աստուածս, Աստուածս, ի՞նչ տառապանք, ի՞նչ ցաւ և ի՞նչ միսթարութիւն միանգամայն: Գուրգուրանքով, ջերմեւանդութեամբ կը սեղմեմ Արամին ձեռքերը. աչքերս նորէն կը ծածկուին արցունքներով...

— Ա՛հ, ներքեցէք, կը խնդրեմ, այս վերջի ատեններս ջղային տագնապներու ենթակայ եմ...

Բան մը չպատասխանեն, բայց ձեռքովը զիս չքմեղող շարժում մը կ'ընէ ու աչքերը կը սեւեռին իմ վրաս, անշարժ անթափանց, պաշտու-մով լեցուն... Ա՛հ, նորէն, անոր նայուածքը, անոր սիրելի և ամոքող նայուածքը. ու հանդարտօրէն քովը աւելի ցած աթոռի մը վրայ նս-տած, կը հանգչիմ երկար ատեն, սքանչելի և խաղաղ զգայնութեան մը մէջ, որ կարծես հոգիս արիւնոտ վերքերը կ'ամօքէ... Ու Վահէին մեկնելէն ի վեր առաջին անգամը ըլլալով ուրախութիւնը կը ճաշակեմ, աստուածային և բեղմնատ որ ուրախութիւնը. որ զիս ամբողջովին կը վերացնէ հաճելի և մեղմ երազանքներու մէջ:

Գրեթէ իրարու չ'ենք խօսիր. ի՞նչ կրնայինք ըսել. յայտնի էր որ Արամ բոլորովին կը սխալէր իմ զգացումիս վրայ: Արամ երբեք չէր գիտցած իմ և Վահէին մէջ եղածը. անկեղծութիւնը և պարկեշտու-թիւնը կը պահանջէր որ իրեն իմացնէի, իրեն պատմէի և բացատրէի վերջին օրերուն իր մասին ունեցած վարմունքս, բայց չեմ գիտեր ի՞նչ ներքին և խորունկ զգացում մը զիս արգիլեց այդ խօսքին:

* *

Զարմանալի է որ, երբ ուշադիր և հետաքրքրուած ամենապզտիկ նմանութիւն մը կը փնտռէի Արամին վրայ իր եղբորմէն, ալ մէկ բան չէի տեսներ: Ընդհակառակը, իրենց թիփերուն տարբերութիւնը ալ աւելի ցայտուն մէջտեղ կու գար և քանի՜ կը դիտէի՝ այնքան Արամը տարբեր կը գտնէի Վահէին: Անշուշտ իրականին մէջ այդ տարբերու-թիւնը կայ: Մէկը խարտեաչ է, մինչ միւսը բոլորովին թուխ. և ո՛չ միայն այդ տարբերութիւնը զոյով թիւն ունի իրենց արտաքին գիծերուն, այլ գէմքի արտայայտութեանց՝ ուրիշ նաև խառնուածքներու մէջ ալ: Այլ նակայն, անո՛ր չեմ գիտեր ինչո՞ւ, և ի՞նչպէս, վրդովմունքի մը պահուն բնոյնչմարած մէկ շտրմունքս բոլորովին խռովեց միտքս և երբ չէի սպասեր ալ, գոտայ այնքան ցանկացում նմանութիւնը:

Հիմա ալ այն անձկութեամբ, այն անհամբերութեամբ և այն վրդով-մունքով կը սպասեմ Արամին, ինչպէս կը սպասէի եղբորը: Երբ իր սիւռէթը կը տեսնեմ, պարտէզին թուփերուն մէջէն, շուրջս մթնոլորտը կը պղտորի և զօրաւոր ձնշում մը կը զգամ ճակտիս վրայ: Նրկար ատեն անկարող կ'ըլլամ խօսելու, շարժելու: Ինձի՜ կը թուի թէ՛ բառ մը արտասանելը պատճառ պիտի ըլլայ որ՝ հոգիս բոլոր վրդովմունքը և զիրար հակասող զգացումները հոսանքի պէս դուրս ժայթքին:

Երբ Արամ մեկնեցաւ իրիկունը՝ տարտամօրէն Վահէին կը մտածէի: Գլուխս առի ձեռքերուս մէջ և ուղեցի կարգ մը գնել կամ սահման մը իմ մէջս փոթորիլուող զգացումներուն: Ճշմարտի՜ այդ նմանութիւնը, ուսերու այդ շարժումը բոլորովին անոտն է, անոտը, նայուածքն ալ, երբեմն, երբ խորունկ և անպատում պաշտումով մը բիբերը իմ վրաս կը սեւեռին: Այն ատեն բոլորովին ողորդուած իրենցմէ՛ ճառագայթող

անուշ և գողար լոյսին մէջ, կարծես թէ կը կորսնցնեն իրենց բնական գոյնը և կապտորակ երանգներ կ'առնեն...

Ասիկա պատրանք մըն է անշուշտ, բայց ի՞նչ մեծ վայելք մը իմ յոգնած և ցաւատանջ հոգիիս համար, Ուստուածս, որուն սաստկութենէն բոլորովին սպառած կը զգամ ինքզինքս: Բարերախտաբար ժամանակ չունիմ անդրադառնալու՝ իմ ֆիզիքական վիճակիս՝ որ չափազանց ձախորդ է այս օրերս: Ծունկերս կը կիժոտին և նուազումներ կը զգամ. դարձեալ գունատ եմ, ճիշդ Վոնկիս մեկնած առաջին օրերուն պէս, բաց ի անակնկալ բաժանումի մը առթած յօշոտող ցաւն և վիրաւորուած անասունի մը կատաղութենէն, որ կարծես տրիւնս կը մտրակէր և զիս կրնար մղել ամէնէն զարհուրելի, ամէնէն անակնկալ և անօրինակ ոճիրներու:

Ա՛հ, երբ կը խորհիմ այդ օրերուն....

[Յաջորդով]

ՋԱՊԷԼ ԵՍՍԱՅԵԱՆ

ՇՕԲԷՆ

Հրայրի բոցեղ, երեսաքլաց,
Հրախաղութիւն անվերջ, լուսայեռ,
Ուր ձեռնամկներու ձեռքոս հրիւռներ,
Ճախտանքներ կ'ընեն դէպի երազուած

Ոլորտներն անեզր կառարկութեան
Իրենց բիւրեանց կայծերուն աղուր,
Դիւրանքներն անհուն ճեղալով բոլոր,
Ամբողջ ճափուղայ, ամբողջ կարկեհան:

Զգացումներու ծով մը անասիման,
Ուր ջինջ վէտանքներ յոյզերով անծիր,
Զայրոյթով լեցուն, ցնորհով արբիւ
Մալեգին պար մը անդալ կը դառնան:

Սիրաբոյր բոյն մը քաշունի սիրուն,
Ուրիշ եծծիւններ ցաւի հրամագին,
Սէսխաւ վանկեր յանախ կը լսուին,
Ցնցող սարսուռներ թալով սիրեւուն:

Բուրաստան մը նոխ ցերեզնակութեան,
Ուր գիրգ ծաղիկներ, անմահ, հոյսօէն,
Սրածառութեան մուտքովը կ'օծեն,
Ամէն անոնք որ իրենց մօտենան:

Բնութեան ռաբրերն ոչնչալէս միացած,
Հրիւ, ծով, քաշուն, ծաղիկ կը լուծուին,
Չուլելու համար Շօբէնի հոգին,
Համակ բռիչ, բոյր, անուրջ եւ փերուած:

ՊԵՐՃՈՒՇԻ ԵԱԶՇԵԱՆ

ԵԷՀՈՎԱ

Երկրի վրայ ծըկուն այն շունն աստուծային երբ կենայ
Վերև հոգւոյս, որ կը բացուի հանդեպ հոյին դուզնախաւ,
Եւ թայ անոր յանկարձ ստատու ինչ՝ աշխկի մը նրման՝
Ուր կը բախին թեւ կարապիւն շարժաճրփիկ 'ի շրջան :

Երբ նայումես իմ խորասուզին ճաճանցեղն այն անդունդ,
Ուր ճոխ գունձերն հաստոտքեան կը շողողան զունկազունդ,
Մարգարիտներն այն գիւղերի, զոր էր շունը կարծարձէ,
Անթիւ զարդերն աստուծային շաւիղներուն սասափէ :

Երբ գտնային երկինքի մը աղբիւրացոյն արշալոյս՝
Բեկբեկիչով 'ի շող ու 'ի շող ջերմ խուճերով ժայթքի դուռս,
Այդտեղ ամեն հիւշեմն անոր միևն ճոխովին ջինջ կայծիկ,
Ու ամեն ինչ ոսփ ներսն դառնայ կըլլայ լոյս ծաղիկ :

Երբ ամեն ինչ երգ. դալլալիկ. մրնջիւն, բրզգիւն կը դառնայ,
Ու ամեն բան անմահութեան սրնունդ կ'ունեն եւ կուտայ,
Ու մարդ՝ շրջաւոր այդ երեւոյն՝ կենդանութեամբ շողշողուն
Կարծէ քե օր մը այցիմն պիտի չունի վախճան ա'ջ համբուն :

Երբ բաւալին ձախիս իմ մէջ խոկումներ քե՛ս քիւր վրսեւ,
Ու չկրնայ քանիչ անոնց բոնն իմ միտքիս սրտն նրսեւ,
Որ դանդաղս կանգ կ'ստեն հոն վրայ վերջին խորեւուն,
Եւ անկեցուկ իմ դատաճոյ գլխիչ միտք երեւուն :

Երբ երկինքին սիրոյ՝ հոգիս յափրչակուած 'ի հուր խանդ՝
Սեղմեւ սիրսիս վրայ ճեսի'ջ մը. պաշտելի՛ աղամանդ,
Խնդրելով զո՛ւր ոգեւորի խօսերու յօղն ու հագագ՝
Հրդեհելու համար զայն՝ զիս յափուգ փոքրովն անուրակ :

Երբ ըզզամ՝ որ բնկնայ հոգւոյս հառաջին ինքնին իսկ կըրնայ՝
Սեղդեւ իր քիւ կայնակներովն ուրիշ աշխարհ մի հրսիւյ,
Կենակա՛ ա'ջ՝ յաղբիչ ժամանակին. եւ խորհուրդներս անհուն
Լեցունելով երկինքն՝ անկէ պիտի քափուլ դուռ գեղուն :

Անո՛ւնդ միայն կը սփռփէ զիս, ո՛վ եկնովմ'ջ եկեղովմ'ջ,
Խռովիս սիրսիս նա՛ նա՛ միայն իմ արձագանգ մը կուտայ.
Նա մանաւանդ՝ այս իմ ճախրակն այս յուզումներս անբարբառ
Արձագանգն իսկ եւ անպակաս Քու մեծութեանդ վեհափառ :

Ո՛վ անուն մեծ. Դու չե՛ս նիւնէր իմ հոգւոյս մէջ բախարուն,
Դու չե՛ս նիւնէր իմ բոցեղէն ջրանց վրայ կափկափուն.
Այլ ամեն կիւրք ու՛ ազգ կը գնէ Գեղ հոն զուարթուն կենսարժարձ,
Եւ աղաղակն հոգւոյս թելոյ՝ կ' միջ անունդ, ո՛վ Աստուած :

ՆԱՅՈՒԱԾՔՆԵՐԸ

ՏԻՆԻՆ ԶԱՊԷԼ ՆՍԱՅՆԱՆԻՆ

Ծիածանագեղ, մոգիչ, ոչ-մալի
Աչքեր կը հանչեամ' անձիւր, բոցազէս,
Որոնք բաղձուքեան, սուգի ծառալի,
Յաւին հեռանկը ծըծամ են կուրծքէս:

Արամկարգօրէն առաապելային
Աչքեր կան որոնք կը խմեն յանկաւրծ,
Իմ քարքիչներէս կախուած երազին
Ցամուկ խոնջէնքը գիշերահալած:

Բիբերուն խորէն սերք բազմեցող
Անձանօք հուրքի, հրահոսան բոց,
Կամ հմայքներու երկրային յարգող,
Կնոջ սեւ աչքեր կան անբջազօծ:

Անձնաւորութեան խանդով մոլեկան,
Յօդին բացուելու պատշառս կոկոններ,
Երբեմն նայուածքի պատարագներ կան,
Վայելքի կարօտ, սիրահրաւեր:

Հուարք, ծփանուտ, մզձաւանջային
Արհամարհանքով զինուած անկայուն
Սեւ սարէ աչքեր գոյուրիս ունին,
Որոնք կը խմեն յոյզը կապերուն:

Անհուն գորովի, գրուրեան բոց
Յնցող նայուածքներ կան մազնիսական,
Ինքնուրաց սիրոյ կախարդանք ամբողջ,
Լոգարան յոյսի ու երանութեան:

Բոցեղ աւրուտան, կիրքի համբոյրի,
Մերք իր աչքերէն սարսուռ կ'առկայծէ,
Կնոջ նայուածքը որ կը փրփրի,
Տէրը գիշերուան մաւրէն կեռամ է:

Էլսօրանոյի' առաջապահներ,
Նայուածքներ անբարք, յախեհական,
Յօդեցէ՛ք վրաս միշտ շողակնայեւ
Կախարդութիւնը ձեր զգայութեան:

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ԾԵՐՈՒՆԻՆԵՐԸ

Բ.

Հիմա կ'որդր լրագիրինն է։ Ակնոցը քիթին ծայրը տեղաւորուցած, այրն է որ բարձրաձայն կը կարդայ, քիչ մը շնչասպառ, մէջտեղները կ'իկ'ալով, բարակ զիրերով գրուած տեղերը, բայց մինչև վերջը չարուսնակելով, առանց տող մը փախցնելու։ Ամէն օր նոր անակնկալ մըն է տեսնել թէ՛ որքան մեծ է աշխարհը և որքան բաներ կ'անցնին անոր մէջ։ Կարելի բան չէ որ այնչափ մարդիկ ըլլան հոն աշխատելու, վիճաբանելու, պայքարելու։ Երբեմն կը կարծուի որ հնարուած բաներ են գրուածները, անանկ չէ՞ մեծ հայրիկ։ Ո՛չ, ո՛չ, մեծ հայրիկը ճամբորդած է. շատ առաջ Պելճիքա գացած է և անգամ մըն ալ Զուիցերիա այցելած է. բաներ գիտէ ան որոնց վրայ տեղեկութիւն չունի մեծ մայրիկը։ Իր յիշատակներուն տրցակը կը բանայ ծերուկը, բայց ամէն բան չի կրնար պարզել. գաղափարները առաջուան պէս յստակ չեն. անուններ կան զորս կը չիօթէ. կը չուարի երբ կ'ուզէ բացատրութիւններ տալ։ Բայց ինչ կարեւորութիւն ունի. ատիկա չարգիւր որ մեծ մայրիկը հմայուած մտիկ չընէ անոր ըսածներուն և չհիանայ անոր գիտցածներուն վրայ։

Արդէն օրը կը վերջանայ. Լրագիրը աւարտած է։ Ասկէ զատ, լամպարին լոյսովը կարդալու չէ։ Ան ատեն, չունի և ալուէսի միջև խօսակցութիւնը կը վերսկսի։ Որքան թշուառութիւն և չարութիւն կայ ամէն տեղ։ Օրուան զէպքերը, խնամով քննուած, գոհացուցած են երկու ծերերուն ծարաւը անձանային համար, և միեւնոյն տատեն զանոնք լեցուցած վախով մը, միշտ վերանորոգուած, որ անուշութենէ զուրկ չէ։ Պատահած հրդեհներուն, երկրաշարժներուն և մանաւանդ ոճիրներուն վրայ կը խօսին։ Բայց կամաց կա հաց խօսակցութիւնը կը չեղի և դարձեալ տղաքներուն վրայ կուգան։ Բաւական է որ պղտիկները ձմեռը աղէկ անցընեն։ Կը վերյիշեն Ժողովին պոստիլիթները և Բիէոյին դժուարաւ ակուայ հանելը։ Բարեբախտաբար հիմա մէկ տարի մը աւելի մեծցած են և աւելի կրնան հիւանդութեան դիմանալ։ Եւ կը վերաքննեն զրկուելիք բարի խրատները — շատ փափուկ կերպով՝ չվիրա որելու համար — և կը խօսին այն անակնկալներուն վրայ, որոնցմով պիտի լեցնեն Նոր Տարիի մեծ անտուկները։ Եւ խօսակցութեան ուրիշ առատ նիւթ մը կայ թէ՛ ինչպէս ամէնուն տեղ պիտի գտնան տունին մէջ, երբ ամբողջ ընտանիքը հաւաքուի, իրենց աղամանդեայ հարսնիքին այն մեծ թուակալին, հեռաւոր դեռ, բայց որ կը մօտենայ։ Ասիկա, ծրագիրներու, կշտամբանքներու, կատակներու, հակածարգիրներու անհատնում հանք մըն է։ Բայց երբեմն յանկարծ — գիշերն է որ կուգայ — տեսակ մը մթութիւն կ'անցնի, ձայներ կը մաքին, և, իրարու մօտենալով, երկու ծերերը իրարու ձեռք կը

բունն ու կը խորհին թէ՛ ապագան որքա՞ն քիչ վստահելի է... Ան
ատեն քիչ մը պղտորած ձայնով մը, մեծ մայրը կ'ըսէ.

— «Լամպարը վառէի՞նք արդեօք»։ Ընթրիքը չուտով կը վերջանայ և
սալօն կը վերադառնան իրիկունը անդրեկու։ Շատ անգամ յոգնած են.
գտգտաբար ասիկա չեն, լռութիւններ կան և կէս քուններ կ'ըլլան
դրիօն և սիկաւին վրայ, որ կը մարի։ Բայց ուրիշ անգամներ, երբ
կնամեծար ըլլալ ուզէ, մեծ-հայրիկը ճամնախ կամ օմփնօի քսոքի մը կ'ա-
ռաջարկէ մեծ մարիկին, որ կը ժպտի և որուն աչքերը կը փայլին Սե-
ղանին շուրջը կը նստին, խնամով քարերը կը շարեն և կը սկսին խաղալ,
խորհելով՝ կամաց կամաց։ Ատեն ատեն մեծ-հայրիկը կատակներ մը կը
փախցնէ, միշտ նոյնները։ Մեծ հայրիկը առաջուց կը խնդայ և գլուխը
կ'երեբցնէ. բայց իրաւունքով կը բարկանայ, երբ կը տեսնէ որ ա'ուսինը
կը խաբէ. ան ատեն, մեծ հայրը, թէպէտ ան մեզ շատ անգամ, ինք-
զինքը կը պաշտպանէ անփութօրէն, հպարտ ըրած չարածիւթեանը
հաւար և գո՛՛յ յանցաւոր ըլլալուն։ Բայց մամը տառը կը զարնէ։ Պառ-
կելու անփութօն հրաւիրէ և աս կ'ըլլան ու կ'ընթան ան սենեակը՝ որ
յիստն տարիներէ աւելի է որ իրենցն է։ Եւ, խոհուն ու զո՛հ, մեծ հայրիկը
կը դիտէ մեծ մայրիկը՝ որ կը ծնրադրէ, ինչպէս սովոր է ընել ամէն իրի-
կուն յիստն տարիներէ ի վեր։ Անոր չի հետեւի ինք, որովհետեւ լայ-
նախոս է քիչ մը. գէթ կը յիշէ թէ անպէտ ևզած է. անչուշտ ամէն
ատեն պատարագին կ'ընկերանար կնոջը, բայց երբեմն մարտնչող կը կոչէր
զայն և գէշ խօսքեր կ'ըսէր՝ քահանաներուն վրայ։ Հիմա շտկուած է.
ալ տնարգական խննթութիւններէն հրաժարած է չի սիրեր երբ Աս-
տուծոյ շուրջը կատակներ կ'ընեն։ Եւ եթէ կնոջը հետ չաղօթի, պատ-
ճառք ան է որ՝ պիտի նեղուէր աղօթելուն կերպը չգիտնալուն։ Բայց երբ
վստահ է թէ կինը զինքը չի տեսներ, երբեմն, թոթորկած ձեռքերը իրա-
րու կը միացնէ և տեսակ մը անխօս ինքնամիտութեամբ մը կ'ունենայ, որ
թերեւս մեծ աղօթք մըն է։ Եւ մեծ մայրիկը, որ կը տեսնայ այս ամէն-
քը աչքին պոչով, առանց ամուսինին գիտակցութեան, կը յանձնէ զա-
նիկա վստահութեամբ Աստուծոյ բարձրութեան։ Յետոյ, առաջուան չափ
սիրով, նոյն համբոյրը կը փոխանակեն, և մամը մարելէ ետքը, կը քնա-
նան քովէ քով, մեծ ճերմակ մահակային մէջ, յախճապակիէ Յիսուսին
նայուածքին տակ, օրնու օր մաքառի շրջանակով մը զարդարուած և
որ յիստն տարիներէ ի վեր կը նայի անոնց։

ԱՆՏՐԷ ԼԵՆԹԷՆՊԵՐԿԷՐ

Թարգմ. ՄԱՆՆԻԿ Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ.

“ՍԻՐՈՅ ԶՈՅԸ”

Այս երկու տխուր բառերը փորագրուեցան անոր չիրիմին վրայ՝ Մկրտիչ Քէչէճեան, Բարձրագոյն Վարժարանի ընթացքը աւարտելով՝ կը դառնայ ծննդավայրը, կրթական գործին նուիրուելու համար։ Քանի մը տարի ետքը բախտը զինքը Ամասիա կը նետէ՝ ուսուցչական պաշտօնով։ Իր ծննդավայրէն, ծնողքէն ու ազգակիցներէն հեռու իր առանձնութեան մէջ է որ առիթներ կը ստեղծէ աշխատակցելու քանի մը թերթերու, թարգմանութիւններով և ինքնագիր յօդուածներով։ Ամասիոյ բանաստեղծական միջավայրն էր թերեւս որ երգել տուաւ իրեն առաջին սէրը։ Որ սակայն իր գերեզմանը պիտի ըլլար որ մը։ Վրականութեան ու կրթական ասպարէզին մէջ իր ձեռք բերած յաջողութիւնները լատգոյն գրաւականներ կրնային ըլլալ իր ապագայ բեղմնաւոր կեանքին։ Իր պաշտօնին բերուածով պատեհութիւններ ունեցած էր տեսակցելու՝ Բողոքականներու մօտակայ վարժարանին ղեկավար ուսուցչուհիին հետ։ Մտերմութիւնը կ'օգտուէր և համակրանքը հետզհետէ կ'աւելնար իրարու հանդէպ։ Սիրոյ կայծը սկսած էր նշուել ազնկան սիրտին մէջ։ Կ'որոշէին իրականացնել իրենց իղնարը, աշուտութեան պատկովը կ'օգտուելով իրարու հետ։ Նշանատուքի ձեռնարկութեանց սկսելու համար՝ զիմել պէտք էր ազնկան ծնողքին, որ անգիտակ էր անոնց իրարու հանդէպ տածած բուռն սիրոյն։ Առաջին գիտութիւն չեն պատասխաներ ազնկան մայրը և քոյրը, ինչպէս սովոր են ընել զաւառի ծնողքներ։ Դիմում կ'երկրորդուի, կ'երրորդուի։ Երրորդաւորը վրայ զիտողութեան արժանի որ և է թերութիւն չեն զաներ, և ազնկան ալ ցոյց տուած կէս մը համաժողովեր արարեալին վրայ՝ կ'ընդունին առաջարկը։ Երկու արտակիցները կը խալտան անոն հրճուածութեամբ։ Պարմաններուն այս բերկրանքը երկար չտևեր սակայն։ Այն օրը, որուն յաջորդ իրիկունը որոշուած էր կատարել նշանաւորքը, Մկրտիչ նամակ մը կ'ընդունի։

«Սիրելի Մկրտիչս երեկ իրիկունքէ ի վեր կը ճառարայիս յազման սասիկ նուազներու մէջ։ Պատուելի պատուար մը ուզած է քաղել երեսփոխ սերտեռն մի եւ։ Ա՛ն պատմող պիտի ըլլայ մեր յօրախոսութեան։ Նշանաւոր ստիպում եմք յետագիւղ պէտք է որ սպասեմք անկէ մը։

Քուկոյ անձնուէր ԱՍՏԼԻԿՍ

* Վերջերս նմանապէս հաղորդուեցաւ սիրային սրտակցիմ ճամբի մը շուրջ։ Որ մեծ յուզումով համակած է տեղացիները։ Այդ ճամբին կը զոհուէին երկու Հայ երեսասարդուիներ եւ ուսուցիչ մը, որ յուսահատութեան վնասկոտ եղանակ մը մէջ կը դիմէր ոմարի ու անձնասպանութեան կրկնակ եղանակին։ Այս ճամբը, զեռն հասարակ դիպի մը ընտրեմ, ունի գոյ՜ը ընկերային շուրջ նշանակութեամբ հարցի մը՝ սկզբնապատճառ ունենալով արգելքի եւ ընդդիմութիւնը երեսփոխ պաշտօնակցի մը մոլոր ըմբռնումներուն։ Իր ը կերային այդ նշանակութիւնովը շեշտուող շահեկանութեան համար՝ կը հրատարակեմ վերջին օրհուրն եւ մահուան ու սնտազործութեան պարագաներուն նկատարարութիւնը Հայ խոսամեայից երեսասարդին։

Խմբ. Ծան.

Կ'ահաբեկի երիտասարդը և մէկէն չկրնար վերլուծել իրողութիւնը. կ'երթայ տեսնել Աստղիկը՝ որ դասարանին մէջ առանձնացած՝ գլուխը երկու ձեռքերուն մէջ սեղմած՝ խոր մտածութեամբ մէջ ընկղմած էր: Մկրտիչ տեսնելուն պէս կը սթափի և աչքերը կը լեցուին արցունքով. այս տեսարանէն կը փզձկի երիտասարդին սիրտն ալ և հեծկտուքներու մէջէն հազիւ կրնայ հասկցնել «ի՞նչ կայ... ի՞նչ եղաւ» բառերը: Աղջկան ծնողքը իրենց հաւանութիւնը տայէ ետքը Աստղիկ հայր չունէր — դիմած էին իրենց երէցին՝ անոր ալ կարծիքը և հաւանութիւնը առնելու համար՝ որ սակայն բացարձակ կերպով ընդդիմացի և արգելքներ յարուցեր էր, համոզել ջանալով զանոնք՝ որ «իրենց աղջկը հոգևորապէս կորսուած պիտի ըլլայ, որովհետեւ Հայ երիտասարդի մը հետ ամուսնանալով, պիտի լքէ մայրենի եկեղեցին և պիտի ընդունի լուսաւորչական կրօնքը: Մեզք չէ՞ր աղջկան. կը պակսէին բողոքական հասարակութեան մէջ լաւագոյն երիտասարդներ՝ որ այդ տեսակ արիւնքներուն տրուէր իրենց աղջկը. անհնաւատքեան հշտնեւ ալ կ'երեւային արդե՞հ այդ երիտասարդին վրայ. թէ ինք ատանկ կ'ուզէ և ատանկ պէտք է ըլլայ, քանի որ աղջկը իր ալ զուարթ կը համարուի: Հայ, եկեղեցիին և անոր դաստիարակութեան և մասնաւորաբար իր սերունդին հասցէին եղած այսքան անի աւ նախատինքներուն առջև աղջկը թէ և չկրնար զսպել ինքզինքը, սակայն կը հանդուրժէ, չվիրաւորելու համար ծնողքը՝ որոնք շուարած էին: Այս անասողութիւնը երկար կը տեւէ, բայց Մկրտիչ չուսահատիր և շարունակ կը կրկնէ իր դիմումները: Օր մըն ալ պատուելին տուած խորհուրդին համաձայն, կը խոստանան տալ իրենց հաւանութիւնը, պայմանով որ լքէ Հայ, եկեղեցին և ընդունի Բողոքականութիւնը. թէ ոչ՝ ալ ո'չ մէկ առաջարկ ընդունելի պիտի ըլլայ: Ահա վճռական խօսքը, որուն կը պատասխանէ երիտասարդը, յայտնելով թէ՝ ո'չ իր մայրենի եկեղեցին, ո'չ ալ իր տարիտ ձին կրնայ լքել:

Երկու վշտահար սիրահարները՝ ալ կը զագրեցնեն իրենց յարաբերութիւնը. թուղթի կտորներու վրայ արձանագրուած սե տասներով միայն կը սկսին խօսիլ իրարու հետ. ալ հառաչ անքներու և հեծութեան կեանք մը կը սկսին ապրիլ՝ իրարմէ հեռու. սակայն իրարու միանալու համար երկուքէն ծնած ուխտը, չէր թողուր որ անոնք կարենային բաժնուիլ իրարմէ. ուստի կը յուսադրեն և կը խրատուեն զիրար: Իրենց սէրը փոխանակ չի՛լանելու՝ ասելի կը հրահրուի երկար կը տեւէ այս հոգեկան փոթորիկը. երկուքն ալ տնորդուելի էին. երիտասարդը չէր կրնար հակառակ շարժիլ իր սկզբունքին, լքելով իր Մայրենի եկեղեցին. միւս կողմէ չէր կրնար լքել իր սիրականը, որուն առջև ըրած իր հանգիստը ուխտը կը տանջէր զինքը:

Առտու մը Աստղիկ գոց պահարան մը կը ստանայ.

«Սիրակարօս Աստղիկ. Ուրախ եմ այսօր, ամեն դժուարութիւն հաղթուած է:

Այս իրիկուն պիտի գամ ինչ ծեսներու մեր բնակարանին մէջ : Դուն ալ ուրախացի՛ր, պիտի գամ . . . պատկուելու ինչի հետ . . . յաւիտեական ամուր կազմելու համար մեր սեռերուն գրկախառնումովը : Ամեն բան վերջացած է, փայտերուէ՛, արիացի՛ր, ասկէ վերջը երջանիկ պիտի ապրինք : Բուկր յաւեո՛ Մ. ք. »

Իրիկունը, Աստղիկ հաղիւ դպրոցէն տուն դարձած, Մկրտիչ կուգայ իր խոստացած այցելութիւնը տալ : Սենեակին մէջ կը գտնէ իր սիրուհին ու անոր քոյրը, որ ամէնէն աւելի ազդուած էր երէցին համոզումներէն : Սիրատուր երիտասարդը վերջնական պատասխանը առնելու համար Աստղիկի քրոջը կը կրկնէ իր առաջարկը : Նոյն սառ մերժումը՝ վճռական չեղումով և անարգական մակդիրով կը նետուի երիտասարդին ճակտին, որմէ աւելի տակնուվրայ կ'ըլլայ անոր արդէն խռոված երեակայութիւնը և զգացումներուն անզուսպ գերազրգուծեան ազդեցութիւնով հոգին հրդեհող բոցերը կը փայլատակին աչքերուն մէջ : Դէմքը կը բոցավառի, ուղեղը կը կորսնցնէ իր հաւասարակշռութիւնը և կը քաշէ հրազէնը. մէ՛կ, երկու՛. և կը զգետնէ զայն վիրաւոր : Յետոյ դառնալով իր տարփուհին. « Պաշտելի հոգեհատորս, այս պիտի ըլլայ միակ լաւագոյն ճամբան վերահաս դժբաղդութիւնէն ազատելու. ասկէ ետքը երջանիկ կ'ըլլանք, եթէ չկրցանք հոս միանալ, գէթ գերեզմանէն անդին միանանք. քաջութիւն » : Այս սրտառու խօսքերը կ'արտասանէ արիութեամբ, որուն իբր պատասխան սիրուհին համակերպող մէկ ակնարկին վրայ՝ կը պայթեցնէ հրազէնը անոր սիրտին մէջ և Աստղիկ անշնչացած կ'իյնայ կիսամեռ : Երիտասարդը կը ծնրադրէ անոր առջև և հրազէնը կը պայթեցնէ իր բերնին մէջ և վայրկեանին կ'աւանդէ հոգին : Աստղիկ որ սիրտէն վիրաւորուած էր, քիչ ետքը կը մեկնի իր սիրականին ետեւէն, իր վերջին խօսքերը ուղղելով մօրը և քրոջը. « Ինք և պատուելին եղաք պատճառ մեր դժբաղդութեան » :

Իր փափաքին համաձայն «Սիրոյ Զօհը» տխուր բառերը արձանագրուեցան անոր դամբարանին վրայ : Շատեր սիրոյ դիւցազն հռչակեցին զայն, վեհանձն արիութեան ճշմարիտ նշան նկատելով անոր արարքը : Գոնուեցան ուրիշներ ալ, որոնք անգութ հրէշ մը ներկայացուցին զայն, անարդարանալի ոճիր դաւանելով անոր գործը : Չարերն էին վերջինները, որոնք չեն զգացած սէրը, սէրը տուի միայն հասկցող, անոր սրբութեան հանդէպ աղտոտ զգացումներ միայն սնուցանող անձերը. ասոր համար է որ կը դատապարտէին անգթօրէն՝ սիրոյ և նենգամտութեան զոհուած այդ հերոսը՝ անոր արարքը ոճիր դաւանելով : Իր վերջին նամակներէն ^[1] անկեղծութիւնն է որ կը ցայտէ. իր արարքը ճշմարիտ և անկեղծ արտայայտութիւն է իր զգացումներուն : Ծշմարիտ սէրը՝ կեղծել չգիտեր : Այդ անկեղծութիւնն էր ահա՛, որուն առջև բան մը չարժեք իր այնքան թանկազին երիտասարդ կեանքը՝ յոյսով, երազներով բարախուն :

Խեղճ թշուառ զոհ անձկամտութեան :

ՍՈՒՐԵՆ ԱՍՈՒՐԵԱՆ

[1] Յես Մանգուռէ, Յունիս 21 :

ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ

— 000000 —

Թէ որ կէտին մէջ կը կայանայ որ և է գրական հրատարակութեան մը յաջողութիւնը, ահա հարց մը՝ զոր կարգ մը փրանսացի քննադատներ կ'ուղղեն իրարու, նպատակայարմար լուծումի մը և տրամաբանական ելքի մը բերելու համար զայն։ Բայց ամէն բանէ առաջ, սա խնդիրը կայ քննելի թէ՛ քննադատ մը, գրական գործ մը վերլուծելու միջոցին ինչպէս պիտի կրնայ խոյս տալ տպաւորական, ենթակայական ազդեցութենէն, ըլլալու համար մի միայն առարկայական (objectif փոխանակ subjectif) այսինքն եղածը տեսնել և դատել միայն, իբր ժամանակին մտաւորական վիճակին արդիւնքը եղող Արուեստի արտադրութիւն մը։ Ասիկա իրօլիթ Թէնի նշանաբանն էր թէ և, որ շատոնց կորսնցուցած է իր արժէքը իբր քննադատական մեթոտ և սակայն ունի իր մէջ հիմ մը, գաղափարի գորեղ արտայայտութիւն մը՝ որ պիտի կրնար ազդել տակաւին նոր Դպրոցի մշակներուն վրայ։

Ուրիշ լաւագոյն մէկ միջոցն ալ գրական գործ մը աղէկ դատելու, որուն հետեւած են նոյնպէս հին Դպրոցէն շատեր, սա է թէ՛ փոխանակ գիրքին ամբողջութենէն տպաւորուելու, պէտք կ'ըլլայ քննադատել զայն համաձայն Արուեստին պահանջած հաստատ, որոշ ու հիմնական օրէնքներուն։ Այս պարագային է միայն որ գիրքը կրնայ իբր առարկայ մը ըլլալ քննադատին դատողութեան ու վերլուծումին։ Բայց ասանկ ալ ըլլալու համար, Գեղեցկագիտական դրութիւնը կաղմուած ըլլալու էր արդէն, ինչ որ չէ. գեղեցկագիտութիւնը (Esthétique) կազմուելու, բարգաւաճելու վրայ է, բայց ըլլալիք է տակաւին, եղած չէ մինչեւ հիմա։ Հիները իրենցը ունէին, բայց ան ալ չի ծառայեր արդի պահանջումներուն և պէտք է սպասել։ Բայց ինչպէս ընելու է ուրեմն որ քննադատ մը գրական հրատարակութիւն մը վերլուծելու, կշռելու համար չդադրի առարկայական (objectif) ըլլալէ։

Հոս է ահա որ միտքի մարդիկը կը շփոթին և կը վարանին վճռական բան մը ըսելու։ Ոմանք կը կարծեն թէ լաւագոյն է գիրքի մը թողած տպաւորութենէն դատել, անկողմնակալօրէն սակայն, փոխանակ մտածելու գտնելու համար թէ՛ որոնք են պատճառները իրենց զգացած տպաւորութեան։ Ուրիշներ, մի միայն տպաւորական ըլլալով, կարդացուած և քննուելիք գիրքին մէջ փոխանակ հեղինակին միտքի կարողութիւնը ճանչնալու, իրենց անձնական եւը դատած, ճշդած ու վճռած ըլլալու երկիւղէն, կը յօժարին խոստովանիլ թէ գիրքը իբր առարկայ դատել և քննել աւելի ճիշդ է և ուղիղ՝ մտաւորական մարդանքի մը համար։

Բայց բոլորովին տարբեր պարագայ մը կայ գործին մէջ, գիրքին գտած յաջողութիւնը։ Իրաւքնէ, երբ ընթերցող հասարակութիւնը իբր գեղեցիկ և հաճելի գործ մը հռչակէ որ և է հրատարակութիւն մը, ինչպէս թատրոնին մէջ ջերմաւանդօրէն կը ծափահարէ թատերական խաղ մը, արդեօք քննադատին պէս իբր միտքի յաջող արտադրութիւն մը կը դաւանի ու կը վճռէ զայն, թէ ոչ կը մղուի ընել այդ բանը մի միայն իր զգացած խորունկ տպաւորութենէն առաջնորդուելով։

Եւ ասանկով եղած են շատ մը հեղինակներ, լաւ թէ գէշ, որոնք կը չփոթուին իրարու հետ: Ոմանց անարդար յաջողութիւնը հասարակութեան քով նսեմացուցած է ուրիշներու արդար կարողութիւնը և արժանիքը: Քննադատ մը, այս պարագային, ըլլայ տպաւորական, ըլլայ առարկայական, աննշմարելի կ'անցնի յաճախ և կը մնայ իբր գեղեցկագէտ հոգեբանի մը հրճուանքին մէջ, որ չէ կրցած սակայն ընել հանրութեան հոգեբանութիւնը:

* *

Ինչ որ ալ ըլլայ, սա ճշմարիտ է թէ գիրքի մը յաջողութիւնը և արժէքը զուգընթաց կը յառաջանան: Գրական երկ մը որ յանկարծապէս յաջողութիւն գտած է, կ'ապացուցանէ թէ անով հեղինակը գիտացած է իր ատենի ժողովուրդին միտքին վրայ հզօր ազդեցութիւն մը ընել: Կան գործեր ալ որոնք իրենց հրատարակութենէն շատ ետքերը յաջողութիւն գտած են. այս ալ կ'ապացուցանէ ուրեմն որ ատոնք գրուեր են աւելի ետքի ժողովուրդին միտքին վրայ գործելու արժանիքով: Նախորդ դարերու դասական մեծ հեղինակներուն գործերը այս կարգէն են մասամբ և կը մնան տակաւին իրենց սկզբնական արժէքին մէջ, Հիմա ըսողներ ալ պիտի ըլլան նաև թէ՛ ամէնէն գեղեցիկ գործերը անոնք չեն իսկապէս որոնք սկիզբները յաջողութիւն գտած չըլլալով, տարիներ վերջ յափշտակուած են ձեռքէ ձեռք: Ասիկա ալ իր առաւելութիւնը ունի անշուշտ, ինչպէս որ ունի իր պատճառները: Մնաց որ, գրական մարդ մը, որքան ալ հանճարի տէր, չկրնար ունենալ միշտ դաւիք սերունդի մը վրայ մտաւորապէս ազդելու և գործելու միջոցը, բայց անոնք որ ունեցած են այս միջոցը, ինչպէս Շաթոպրիան, Վօլթէն, Ժ. Ժ. Ռուսօ, Գօռնէյլ, չյիշելու համար ըստին ալ, կ'ապացուցանեն իրենց միտքին ճշմարիտ մեծութիւնը և իրենց երեւակայութեան անբաղդատելի ուժը: Բայց պէտք չէ մոռնալ թէ այն վայրկենաբար ծնած մեծ յաջողութիւնը՝ որ կայծակի արագութեամբ հեղինակը կը հռչակէ իբր օրուան մարդը, արհամարհելի յաջողութիւն մը չկրնար ըլլալ. աս ալ կարելի է նկատել ապացոյց մը անոր միտքին հզօր արտայայտութեան և ժողովուրդին վրայ ունեցած ազդեցութեան:

* *

Անդրադառնալով քննադատութեան, իր կատարած դերը կրնայ տարօրինակ թուիլ արդի վիճակին մէջ: Նախ վտանգաւոր է քննադատել գրական գիրք մը՝ որ յանկարծական յաջողութիւն մը ունեցած է. յետոյ քննադատը արհամարհելի կ'ըլլայ եթէ նոյն այդ գիրքին հեղինակին գտած յաջողութենէն չմօրած, անոր անձին չուրջը դեգերի, և եղբայրական. - չ'ի՞նչ պէտք կայ զբաղիլ հեղինակին տաղանդովը կամ արուեստովը. քանի որ իր գիրքը յաջողութիւն գտաւ այսքան, ըսել է տաղանդաւոր գրագէտ մըն է, մեծ միտքի և մեծ հոգեբանութեան տէր հեղինակ մը: Սխալ, քննադատութիւն չեն ըսեր ասոր. քանի՞ քանի՞ գրական երկեր կան յաջողութեան բախտին չարժանացած, որոնք սակայն կրնան նկատուիլ իբր միտքի հրաշալի արտադրութիւններ:

Այսպէս, եթէ պէտք է, կարելի է յիշել քննադատներ, որոնք մի միայն գործին պարզած լարեմասնութիւններէն, գեղեցկութիւններէն ներշնչուելով, դատած և քննած են զայն, չչեղելով երբեք իրենց քննա-

դատական չափըն, իրենց վերադառնալու մեթոտն: Պահանջներ, Սէնթ-Պէոլ և դեռ վերջերս ժուլ Լըմէթու քննադատեցին գործեր՝ որոնք հասարակութեան աչքին ոչինչ արժէք չունէին, բայց գրական պատմութեան մէջ կը մնան և պիտի մնան իրր տաղանդի փայլուն նմոյշներ: Մանաւանդ, եթէ պէտք է ըսել թէ՛ գրական գործ մը իր գտած յաջողութիւնէն պէտք է դատել, այն ատեն պէտք է նաև ըմբռնել և բացատրել թէ՛ ուրիշ՝ ծագում առած, ի՞նչ պատճառներէ յառաջ եկած է այդ յաջողութիւնը: Հեղինակը այն գրական հատորին՝ որ ներկայ գրութեանս խորագիրը կը կազմէ, չէ կրցած գրական կարգ մը նոր և յանդուգն գաղափարներ յայտնելով իսկ, ապացուցանել այս մասին մէջտեղ դրուած կարգ մը հարցերը: Օրինակի համար, ուրիշ է Մարսէլ Բուֆօի շարունակական յաջողութիւնը իրր վիպագիր. որոնք են նոյնպէս կարգ մը ուրիշ նոր հեղինակներու համբաւին պատճառները: Ասոնք բոլոր ըսուած ճշդութեամբ ըլլալու են քննադատի մը կողմէ, որպէս զի եղած յաջողութիւնը արտաքին համակրութեան մը, ցոյցի մը ցուցումը չըլլայ: Կարելի չէ քննադատական նոր ուղղութիւն մը ամփոփել սա գաղափարին մէջ թէ գիրք մը իր գտած յաջողութենէն, իր ըրած ազդեցութենէն կը դատուի: Օրինակներ կան ասդին, այս դաւանանքին հակասող: Ռենէ Պազէն, Հանրի Լավտան, Մօրիս Պարրէս այն հեղինակներէն չեն՝ որոնք յաջողութիւն գտած ըլլան հասարակութեան քով, միայն օրուան կեանքին, օրուան բարձրուն ճարտար նկարիչները ըլլալուն համար. ասանկ ենթադրութիւն մը քննադատական օրէնքներուն անհամաձայն պիտի ընթանար, նոյն բանը կրնայ ըսուիլ Բօլ Էրվիէօի, Էտմոն Ռօսթանի համար, որոնք արդար համբաւ մը չինած են ստուգիւ՝ իրենց գեղեցիկ գործերով: Եւ արդէն, իբր եղբակացութիւն, կարելի է ըսել համարձակօրէն թէ՛ երբ գրական երկ մը յաջողութիւն կը գտնէ հասարակութեան քով, առանց տարակոյսի հզօր ապացոյց մըն է թէ՛ նոյն այդ երկին հեղինակը տաղանդի տէր մէկն է, թէ անիկա ունի իրականութեան բոլոր դժայնութիւնները և թէ զիտէ ժողովուրդին հոգեբանական վիճակին բոլոր գաղտնիքները: Ամէն լուրջ և ինքնահաւատ քննադատ պէտք է որ այս յատկութիւնները փնտռէ և որոնէ հեղինակի մը միտքին արտադրութեանը մէջ:

Եւ ամէն հեղինակ հաւասարապէս նոյն գործերով չէ որ պիտի կարենար տիրանալ յաջողութեան: Ինչ որ կը կազմէ Լավտանի յաջողութիւնը, նոյն բանը չկրնար ծառայել Էրվիէօի յաջողութեան: Յաջողութիւնները, հասարակութեան գիտակցութեամբ արժանացած, տարբեր կերպերով ու տարբեր ձեւերու տակ կը ներկայանան: Հեղինակ մը կը յաջողի հասարակութեան ճաշակին և մտածումներուն, ըմբռնումներուն յագուրդ տուած ըլլալուն համար, ուրիշ մը կը յաջողի հակառակօրէն նոյն այդ հասարակութեան մոլութիւններուն, գէշ բարձրուն դէմ կռուած ըլլալուն համար:

Եւ նորէն պէտք է կրկնենք հոս, իբր վերջաւորութիւն, Մօրիս Պարրէսի հետ, թէ. «Այո՛, յաջողութեան մը է՛ն կարեւոր և է՛ն անմիջական գաղտնիքը, միշտ և ամէն տեղ արուեստը ու տաղանդն է հեղինակին»:

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՀԱՅԵՐԷՆԸ

Ամիսներ առաջ, Գրաւսերի և Մ. Նաթանեանի կողմէ, աշխարհաբարի առիթով լեզուական ընդհանուր վիճաբանութիւն մը թէև զրգուռեցաւ, բայց աննշմար անցաւ, մէկը չուզելով այդ շատ ծեծուած, կարողագոյններու կողմէ ծեծուած և աղէկ ծեծուած խնդիրով նորէն գրադիլ : Ես ալ իմ մասին, երբեք չպիտի փորձուէի, այդ առիթով գրիչ շարժել, եթէ չերևար «պէտք չէ՝ միօրինակութիւն» վերանադիրով Մ. Նաթանեանի մէկ նոր յօդուածը, ուր յօդուածագիրը այս անգամ, սպասելէ ալ յուսահատ, իր հարցումին ինք կը պատասխանէ, և եզրակացութիւններ կը հանէ : Իր եզրակացութիւնները, ինչպէս և լեզուական խնդիրը ըմբռնելու իր եղանակը զարմանալի երևցան ինծի, այդ պատճառով ուզեցի քիչ մը զբաղիլ անոնցով : Տիար Նաթանեան կը փութայ նախ ճշդել աշխարհաբարի հարց ըստածը, զայն ներկայացնելով երկու հարցումներու մէջն տակ. — 1. Աշխարհաբարի մէջ աշխարհաբարի քերականական կանոնները միայն զործածելու է, թէ ոչ պէտք է, հարկ եղած ատեն, գրաբարի կանոններ ալ զործածել : — 2. Աշխարհաբարի մէջ, աշխարհաբար բացատրութիւններ միայն զործածելու է, թէ ոչ պէտք է, հարկ եղած ատեն, գրաբար ասացուածներ ալ զործածել : Ահա Նաթանեանի ճշդուած հարցումները : Անմիջապէս ըսեմ սակայն, որ ես, այս հարցումներէն բան մը չի կրցայ հասկնալ : Ի՞նչ կը նշանակէ հարցնել թէ աշխարհաբարի մէջ պէտք է գրաբարի յատուկ քերականական ձևեր կամ ասացուածներ զործածել : Եթէ աշխարհաբարի մէջ կարելի ըլլար աշխարհաբար չեղող ասացուածներ կամ քերականական կանոններ զործածել, ալ ո՞ր կը մնար անոր աշխարհաբարութիւնը : Տիար Նաթանեան ի՞նչ կը հասկնայ աշխարհաբար և գրաբար ըսելով : Իրեն համար գրաբարը արդեօք միեակ ճգնիկի և անոր նմաններուն գրած լեւոն է : Եւ ինչ որ

չնմանիր այդ լեզուին, անոր կազմութիւնը, կերտուածքը չունի՝ գրաբար ըլլալէ զաղրելով՝ աշխարհաբար կ'ըլլայ արդեօք : Ա՞ն է գրաբարին և աշխարհաբարին սահմանը : Անշուշտ պէտք չունինք յիշեցնելու իրեն, որ գրաբարը ժողովուրդի մը գրած լեզուն է, իսկ աշխարհաբարը անոր խօսած լեզուն : Լեզուն մը իր գրաբարը և աշխարհաբարը մի և նոյն ատեն ունեցած կ'ըլլայ երբ այդ լեզուն նոյն ատենուան մէջ իրարմէ տարբեր կերպերով կը գրուի ու կը խօսուի : Եւ, որ դարուն ալ երբ խօսուած և գրուած լեզուները մէկ չէին, խօսուած լեզուն կը ձևացնէր այն ատենուան աշխարհաբարը, իսկ գրուածը գրաբարը : Գրաբարը որոշ շրջանի մը կամ շրջաններու մէջ զործածուած լեզուն չէ՝ ուրեմն, ոչ ալ աշխարհաբարը այդ շրջաններէն զուրս գործածուող լեզուն : Ժողովուրդի մը զործածած լեզուն, կրնայ ամէն շրջանի մէջ իր գրաբարը և աշխարհաբարը ունենալ, ինչպէս իւրաքանչիւր շրջանի գրաբար կամ աշխարհաբար կրնայ նախորդ շրջաններու մէջ գրուած կամ խօսուած լեզուներէն տարբերիլ, աւելի ընտիր, կամ աւելի գէշ ըլլալով : Լեզուն մը կրնայ նաև գրաբար և աշխարհաբար չունենալ, նոյն շրջանի մէջ գրուած և խօսուած լեզուն իրարու ճիշդ նման ըլլալուն : Այս պարագային, այդ շրջանին համար՝ ալ գրաբարի և աշխարհաբարի խնդիր չնմար և եթէ այդ լեզուն բաղդատենք նախորդ շրջաններու մէջ գործածուած լեզուին հետ, դէմ դէմի կ'ունենանք ո՛չ թէ աշխարհաբար և գրաբար, այլ նոր կամ կենդանի լեզուն (langue moderne կամ vivante) հակադրուած հին կամ մեռած լեզուին (langue ancienne կամ morte) : Կարծեմ երկար օրինակներով ասոնց ճշմարտութիւնը փաստաբանելու պէտք չկայ :

Կը հետեւի ուրեմն՝ որ աշխարհաբարը ժողովուրդին, իր հասկցած քերականական, բառակազմական և ուրիշ օրէնքներով ձևած, կերտած և խօսած լեզուն է, որուն օրէնքներուն ամէն կերպով համաձայն գրողը գրած կ'ըլլայ աշխարհաբար, իսկ ան որ անոր օրէնքները չյարգեր և իր գրածին մէջ աշխարհաբար չեղող կանոններ և ասացուածներ կը մտցնէ, գրած կ'ըլլայ ոչ թէ աշխարհաբար, այլ հիմակուան աշխարհաբարին հետ թաղապարտով գրաբար, զոր կարելի է կոչել աղդի

* Ժամանակին ստացած էիմի մեր փաստաբան աշխատակիցի և այս յօդուածը, բայց Մասիսի դատարանին հետեւանով, այսօր միայն կարող կըլլամ հրատարակելու :
Լամբ. Ծան.

գրաքաւրը, իսկ հին գրաբարին հետ բազդատելով՝ անծանաչ լեզու մը :

Ինծի համար անհասկանալի մնաց ուրեմն, Տիար Նաթանեանի հարցումը թէ « Պէտք չէ՞ աշխարհաբարի մէջ՝ գրաբար կանոններ և ասացումներ գործածելը »: Բայց այն ատեն, կը կրկնենք, ո՛ւր կը մնայ գրուածին աշխարհաբարութիւնը : Եւ արդէն, մեր մէջէն ո՛վ գուտ, մշմարիտ աշխարհաբար կը գրէ [1] : Ամէնքնիս ալ աւելի կամ պակաս ճիգ մը կ'ընենք կարելի եղածին չափ մաքուր աշխարհաբար գրելու, բայց մէջերնուս որի՞նչ գրածը կատարեալ, անխառն աշխարհաբարէ [2] : Եւ դուք Տիար Նաթանեան, օրինակի համար « Ես ալ իրաւունք ունիմ, շատ իմ քննադատ կամ ուղղորդող լեզուական հարցերով զբաղելու » գրելէդ ետքը չի՞ պիտի պնդէիք թէ գրածնիդ աշխարհաբար է . բայց ասանկ աշխարհաբար ո՛ւր տեսնուեր է . ժողովուրդը երբ ասանկ բան խօսեր է : Իմ կարծիքովս, աւելի՛ բանաւոր կ'ըլլար, եթէ հարցումնիդ հետեւեալ կերպով բանաձևէիք. — Պէ՞տք է գուտ, անխառն աշխարհաբար գրելով նոյնացնել խօսուած և գրուած լեզուն, թէ ոչ պէ՞տք է աշխարհաբարին վրայ աւելցնելով հին գրաբարի կանոններ և ասացումներ, կազմել նոր գրական լեզու մը և այս կերպով դէմ դիմաց ունենալ արդի գրաքաւրը (գրագէտներուն գրելիք լեզուն) և հիմնականաւ աշխարհաբար (ժողովուրդի խօսած լեզուն) : Այսպէս բանաձևուած հարցում մը, ունի անշուշտ լեզուական իր մեծ կարևորութիւնը, որուն մասին կ'արժէ լրջօրէն խորհիլ ու գրել : Իմ խոնարհ կարծիքս յառաջիկային : Բայց անցնինք և լսենք Տիար Նաթանեանի՝ իր հարցումներուն տուած պատասխանները : Տիար Նաթանեան իր առաջին հարցումին իբր պատասխան կ'ըսէ. « Լեզուն, չափուած, ձևուած կապարի կամ կաղապարի տակ չգրուիր և աւելորդ փորձեր ընել է այդպիսի ունայն ճիգեր ծախել : Կարելի չէ երբեք հաւատալ թէ այդպիսի փորձ մը արդիւնաւոր ըլլայ : Ժողովուրդը ստիպել որ անպատճառ միևնոյն հոլովները գործածէ անպայման, առանց տարբեր ձևերու և այլազանութիւններու, ըստ մեզ, կը

նմանի յանձնարարելու օրին՝ որ միշտ միևնոյն ուղղութեամբ փչէ : Եթէ երբեք կարելի է հաւատալ թէ այդպիսի յանձնարարութիւն մը օրին վրայ պիտի ազդէ, կարելի կ'ըլլայ նաեւ ընդունիլ որ շեղումի միօրինակութիւնը հնաւոր ըլլայ : Հետևաբար խնդրոյն երկու կէտերէն առաջինին համար պէտք է եզրակացնենք՝ որ աւելորդ և անկարելի ճիգ մըն է, լեզուի օրէնքներու մէջ միօրինակութիւն պահանջելը : Ի՞նչ կ'ըսէք, Տիար Նաթանեան, այս սողերը գրելէ ետքը զանոնք անգամ մըն ալ աչքէ չանցուցի՞ր : Եթէ չեմ սխալիր, միայն աշխարհագրութեան դասատու չէք դուք. լեզուի ալ դասատու էք. բայց այն ատեն աս ի՞նչ խորհրդածութիւն, ի՞նչ եզրակացութիւն է : Մեր հիմնական դեռ չկազմակերպուած, սարմային վիճակի մէջ գտնուող անկերպարան հայերէնէն զատ՝ ձեր գիտցածներէն ո՛ր լեզուն կրնաք ցուցնել որ իր չափուած, ձևուած կապարի ու կաղապարի տակ դրուած միօրինակ օրէնքները չունենայ : Քանի՞ լեզու գիտէք զոր կարելի ըլլայ գրել այնքան licentia որքան սա արդի աշխարհաբար կոչածնիդ : Քանի՞ լեզու գիտէք, որոնց մէջ կարելի չըլլայ սխալ մը անմիջապէս բռնել, սրբագրել, մինչդեռ ձեր արդի աշխարհաբարին մէջ կրնա՞ք կոր նոյն իսկ ձեր աշակերտներուն լեզուական որոշ ուղղութիւն մը ցուցնել :

Ո՛րքէ հանեցիք ուրեմն, թէ լեզու մը ipso facto միօրինակ չկրնաք ըլլալ : Ի՞նչ աղէկ կ'ըլլար, եթէ ատոր ճիշդ հակառակը, լեզու մը պէտք է, անհրաժեշտ է որ միօրինակ ըլլայ, ըսէիք՝ հաստատելիք որ լեզուի մը կատարելութիւնը անոր միօրինակութեան մէջն է : Բայց չըլլա՞յ թէ միօրինակութիւնը (uniformité) շփոթած ըլլաք աղբատութեան (pauvrete) հետ : Չըլլա՞յ թէ ըսել ուզած ըլլաք, որ եթէ միայն աշխարհաբարի կանոնները ու բացատրութիւնները գործածենք, լեզուն իր նոխարութիւնը, հարստութիւնը (richesse) կը կորսնցնէ : Ա՞ս էր ըսել ուզածնիդ : Բայց այն ատեն պատշաճ չէ՞ք գտներ, որ լեզուի մը միօրինակութիւնը և աղբատութիւնը իրարու հետ շփոթող մէկը, աւելի աղէկ կ'ընէ, որ լեզուական խնդիրներու մէջ, իր կարծիքը ինքզինքին պահէ :

Տիար Նաթանեան իր երկրորդ հարցումին ալ պատասխանելով կ'ըսէ . « Մեր կարծիքը

[1] Կը գտնուի :

Խմբ. Ծան.

[2] Կը գտնուի :

Խմբ. Ծան.

ան է Թէ՛ ինչպէս որ առաջին կէտին մէջ
բացարձակ ու անպայման միօրինակութեան
հետամտիլը անտեղի ու աւելորդ է, նոյնպէս
այս երկրորդ կէտին մէջ՝ ալ՝ անհաշտ ըլլալ
ընտել տեք չէ. ի՞նչ փնտս կայ ըստ տեղւոյն
և ըստ պարագային երբեմն գրաբարի ձևերը
պատշաճօրէն գործածելուն մէջ։ Օրինակի հա-
մար. ըստ կամու, ըստ հաճոյս գրաբարի ձևեր
են, իսկ կամփին համեմատ, հաճոյքին հա-
մեմատ, աշխարհաբարի, արդ, ո՞ր ճաշակի
տէր մարդ կրնայ պնդել Թէ՛ վերջին ձևերը
աւելի անուշ, աւելի դիւրին ու սահուն են
քան առաջինները։ Հետեաբար ի՞նչ պատճառ
կայ անհրաժեշտաբար աշխարհաբար գրելու
կամ գրաբարէն հեռանալու համար աւելի
բաղձալուր և դիւրահնչիւն եղող՝ ձևերը ի
բաց ձգել և նուազ անուշ և նուազ սահուն
ձևերը միայն գործածելը։ Կը պատասխանենք
որ՝ երբ այդ ընթերցում, ընդերը և՛ն գործա-
ծենք, գրածնիս աշխարհաբար չըլլար։ Այդ
ընդերով, ընթերցում, եւեցերով, առեցում և՛ն
լեցուն լեզուին ալ՝ աշխարհաբար անունը
տալու իրաւունք չենք ունենար։ Իսկ Թէ այդ
ընթերցում, ընդերը և՛ն ականջի աղէկ կը հնչեն,
հիմակունքիմ հակառակը չենք պնդեր, բայց
դիտել կուտանք որ ականջի խնդիր չիկայ հոս,
խնդիրը աշխարհաբարի վրայ է, և այդ ընթ-
երով, ընդերով գրուած լեզուն՝ ականջի
աղէկ ալ հնչէ, աշխարհաբար չըլլար, նոյնն
կը կրկնեմ։ Այդ ընթերցում, ընդերը և այլն
ուրիշ վճռական օգտակարութիւն մը, անհրա-
ժեշտութիւն մըն ալ ունին եղեր։ Տիար Նա-
թանեանի կարծիքով, և Թէ առանց ատոնց,
զուտ աշխարհաբար գրուի եղեր, ընթերցող-
ներուն ականջներէն, աչքերէն և միտքերէն
գրաբարի ամէն ձայները, ձևերը, նշանները,
վերջնապէս և իսպառ պիտի հեռանան, կոր-
սուին եղեր։ Եւ Թէ և եկեղեցիին մէջ ժողո-
վուրդին ականջները, միտքերը, գրաբարի էջե-
րով պիտի լեցուին եղեր, բայց ատոնք իրենց
համար անհասկնալի պիտի մնան եղեր, Զինա-
րէն ըլլալ պիտի թուին եղեր։ Ըսել է՝ Տիար
Նաթանեան, գրաբարը չմոռնալու, զանկա
հասկնալու մէկ հատիկ միջոցը, աշխարհաբարը
ընթերցում, ընդերով և՛ն կերպարանափոխ ընե՛ն
է։ Ըսել է անոնք որ ձեր և ձեզի պէս ըստ
խնայ, ըստ հաճոյս, ըստ իշտեանց ուխտան
կըն գործներուն գրածները կը կարդան, կը-

նա՛ն գրաբարը մոռնալու վախը չունենալ։
Կրնա՛ն նոյն իսկ պարծենալ Թէ գրաբար գի-
տեն, կը հասկնան։ Արդեօք այս պատճառով
է որ, Կեղրոնականի այս տարուան շրջանա-
ւարտներն ալ գրաբարի դասը՝ վերջին ծայր
երեսի վրայ ձգած էին, մոռնելով Թերևս որ
գրաբարի մասնաւորապէս ուժ տալու պէտք
չունին, քանի որ դասատուներուն առատօրէն
շուայած ըստերը, ընդերը և այլն լիուրի կը
բաւեն գրաբարը ճանչցնելու, սորվեցնելու։
Բայց կատակը մէկդի. ի՞նչ պիտի մոռնէիք
մէկու մը վրայ, որ լրջօրէն աշխատէր համո-
զել ձեզի, Թէ ֆրանսերէնի մէջ գործածական
եղող քանի մը լատիներէն ասացուածները,
մեծապէս կը նպաստեն լատիներէն սորվելու
կամ զոնէ հասկնալու։ Ասանկ բան մը հաս-
տատել ուզողին քիմին՝ արդարացի խնդրելով
մը չի՞ պիտի խնդայիք։

ԱՐՄԵՆԱԿ ԻՆՃԷՍԱՆ
(Փաստարան)

ԷԶ ՄԸ ԵՓՐԱՅԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՊԼՏՄՈՒԹԵՆԷՆ ԵՍՍԵՆՆԵՆՆԵՐԸ

Սեմական տարրը, Թէ և փիլիսոփայական մե-
ծոտիք դրուածիւններ կազմակերպելէ հետե-
ւը, բայց իր ճապուկ դիւրամեքութեամբ և իր
ճկուն ճարտարութեամբը ատակ եղած է իրեն
դրացի ազգերուն քաղաքակրթութիւնը որդե-
գրել և իւրացնելու։ Ամուր նկարագիրի տէր
և ձախողանքներու առջև ընկնելի չզգացող
այս զօրեղ տարրը, օտարներու հետ շփման
մէջ ըլլալով, շատ բան փոխ առած է, առանց
իրեն ազգայնութիւնը բարացուցող յատկանշա-
նականը փոխելու, ինչպէս Քաղղէացիներէն,
Պարսկներէն, Եգիպտացիներէն, Աթենացի-
ներէն, Աղեքսանդրեան Դպրոցի վարդապե-
տութենէն։ Այս հռչակաւոր փիլիսոփայական
Դպրոցը բաց էր Հրեաներուն համար ալ, և
շատ մը Հրեաներ խումբ խումբ կը դիմէին
հոն, որոնց մէջ նշանաւոր հանդիսացած են
Յովսէփոս պատմագիրը և Փիլոն Եփրայեցին։
Եւ այս Դպրոցին ազդեցութեամբ Հրեաներու
մէջ, հակառակ փիլիսոփայական դրուածիւնե-

րու, կազմուեցան փիլիսոփայական այլազան ազանդներ, ինչպէս Փարիսեցիներ, Սաղուկեցիներ, Գուպալներ, Եսսենացիներ և ուրիշ մանր մունր ճիւղաւորումներ : Զմոռնանք ըսել թէ, այս փիլիսոփայական ազանդներուն ժամանակ, Հրէաստանի մէջ կային զպրոցներ, ինչպէս Նիլէյի (Nille), Շամմաի (Shammai), Ապթալիոնի Ռաբբիական Դպրոցները, որոնք աւելի փարած էին արտաքինայարգար ձևերու և սնոտի վիճաբանութիւններու : Յիշուած փիլիսոփայական ազանդներէն աւելի Եսսենեանները, որոնք մեր Նիւթին առարկան կը կազմեն, Հրէական աշխարհին մէջ բաւական մեծ դերեր կատարեցին :

Այս աղանդը ոչ քաղաքական և ոչ կրօնական ոգով կազմակերպուած է, այլ պարզապէս կը ներկայացնէ համախմբում մը, ուր մարդիկ իրարու հետ սերտ սիրով զօղուած կ'ապրէին համերաշխաբար, և ուր շեշտուած էր ճգնաւորական կեանքի սրբութիւնը և բարքերու անաղարտ ամբողջութիւնը : Այս լուսէր, լուսնիստ կուսակցութիւնը, հեռու աշխարհի վրդովայոյզ ժխորէն, սուզուած էր վերացական մտածութիւններու և խորհրդապաշտ գաղափարներու մէջ : Փիլիսոփայական այս բաժանումը կոչուած է Եսսենա, որ յունարէն «էսայոյի» բառէն կազմուած է և կը յիշեցնէ Սիւրիական hassa բառը. եբրայեցերէնէն է Հասիդիմ (Hassidim), որ կը նշանակէ «բարեպաշտներ» : Էսսէն բառին ծագման վրայ կարծիքները կը տարբերին. ոմանք Sahab «մկրտել» բառէն ածանցուած կը նկատեն. ուրիշներ Ասահ (Asah) «բուծել», կամ թէ Հաշահ (Hachah) «լուել» բառերէն. ուրիշներ ալ Սախա բառէն՝ որ կը նշանակէ «լուացողներ» կամ «մկրտականներ» : Կամ կը կոչեն Նագիյէմ «ժուժկալներ» : Եսսենացիներն ալ իրենք զիրենք կ'անուանէին « Նագիբէ օլամ » . (առյաւէտ ժուժկալներ) : Դ. Խաչկոնց ալ՝ իր պատրաստած կրօնի ուսման բարձրագոյն ընթացքին մէջ թարգմանած է «սիրկող» . հմուտ բանասէրներուն կը թողում տալ ասոր սահմանը ճշգրտորէն : Այս բաժանումը, ինչ որ ալ ըլլայ, «էսսէնա» բառով մկրտուած է :

(Յաջորդով)

ԴԱՆԻԷԼ ՆԵԱՆԵԱՆ

ՄԱՍԻՍԻ ԴԱԴԱՐՈՒՄԻ ՄԵՋՈՅԻՆ

Տեղի ունեցած կարևոր իրողութիւններէն կ'արձանագրենք հետևեալները :—

Ամերիկարնակ զորգի հանրածանօթ վաճառական Յովհաննէս Էֆ. Թաւանճեան, որ բարերարի անուն մը կը վայելէ համայնքին մէջ, իր կրթասիրական զանազան բարեգործութիւններով, մեռաւ Նիւ-Եօրքի մէջ, երիտասարդ տարիքի մէջ :

Վախճանեցան Կրօն. Ժողովի Ատենապետ Տ. Մեսրոպ Եպիսկ. Սուքիասեան, և Սիսի Մայրավանքին միաբան Տ. Յովհաննէս Եպիսկ. Գազունեան :

★ Արեւելք օրաթերթը, Կայս. բարեհաճ իրատէղով՝ նախկին արտօնատիրոջմէն փոխանցուեցաւ Ազն. Գարեգին Էֆէնտի Պոյաճեանի, որուն կը յայտնենք մեր խնդակցութիւնը և շնորհաւորութիւնը : Արեւելք, որ վերջերս փայլուն վիճակ մը ստացաւ՝ խմբագրական ու վարչական իր նոր կազմակերպութիւնով, վստահ ենք թէ՛ իր գործունեայ վարիչին ու խմբագրական նոր մարմինին ձեռքին տակ՝ հետզհետէ պիտի տիրանայ աւելի փայլուն դիրքի մը :

★ Մեր շնորհակալութիւնները՝ մեր համակրելի պաշտօնակիցներէն Արեւելք, Բիւզանդիոն, Մանգումէ օրաթերթերուն, որոնք համակիր տողերով ծանուցած էին Մասիսի վերաբացումը :

★ Ծանօթ գրագիտուհի և մեր տաղանդաւոր աշխատակից Տիկին Զապէլ Եսայեան, նախորդ շարժու Եւրոպայէն Պոլիս ժամանեց :

ՄԱՍԻՍԻ

Այս Թիւը կը հրատարակենք յաւելուածական էջերով, մեր բազմաթիւ աշխատակիցներուն զրուածքներովը պնդուած ճոխ բովանդակութեամբ, առանց գինին վրայ որ և է փոփոխութեան իր ընթերցողներուն հաճոյք պատճառելու համար Մասիսի գործադրած այս ջանքերէն՝ պարբերաբար ճոխ Թիւերու հրատարակութեամբ՝ որոնք բացառիկ զոհողութիւն մը կ'արժեն խմբագրութեան՝ կը վստահինք թէ զոհ պիտի մնան ընթերցողները և բաժանորդները հաւասարապէս :

Հիմնադիր. Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ: Արտօնատէր. ՅՈՒՐ. Ե. ՄԱՍԻՍ: Տպագր. ՍԱԳԱՆԱՆ


ԺԱՄԱՆՑ ԵՒ ՏԱՂԱՆԻ

Փոխան Սրամիտ Հարցումի, այս անգամ մեր զբօսասէր ընթերցողներուն կ'առաջարկենք պատկերաւոր միտքի զբօսանք մը, որուն ճիշդ լուծումը մինչեւ չորեքշաբթի իրիկուն մեզ հասցնողը պիտի ստանայ սքանչելի ժամացոյց մը:

Հետեւեալ քառակուսիին ո՛ր և է մէկ անկիւնի խորշիկէն մեկնելով, պէտք է անցնիլ իւրաքանչիւր խորշիկէն և դիմացի (օրինակի համար Ա. անկիւնէն մեկնելով՝ պէտք է միւս Ա. անկիւնէն դուրս ելլել) անկիւնէն դուրս ելլել, առանց անգամ մը մտած խորշիկին մէջ մտնելու, առանց մէջի անկիւններէն անցնելու և առանց ո՛ր եւ կ'մէկ հասը քայլը ձգելու:

Բ

Ա



Ա

Բ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ կը դարմանէ ամէն տեսակ ակուայի և լինտի հիւանդութիւնները, փտած ակուաները կը լեցնէ՝ առողջ ակուաներու պէս երկար ատեն գործածուելու պայմանով:

ԲՈՂՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՎ, նուրբ, ճաշակաւոր և դիմացկուն արուեստական ակուաներ կը պատրաստէ, ընականին ճիշդ նման:

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարմանատան մէջ, Բերա, Մեծ Բարմաք-Գարու, Թիւ 8, Կարօտ հիւանդները ձրի կը դարմանէ հինգշաբթի օրերը՝ Բերաի Աղքատախնամ դարմանատան մէջ:

Կիրակի օրերը ժամադրութեամբ կ'ընդունի:

ՊԱԼՔԱՆ

ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐԷՆԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ և պահեստ Ֆրանք 9,500,000

Վերապահովագրական

դրամագլուխ և պահեստ » 142,740,000

ՊԱԼՔԱՆ ԼՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ կ'ապահովադէր հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի եւն., Կ. Պոլսոյ և Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ շատ դիւրամատչելի պայմաններով. իսկ իր միւս երկրորդ ձեւով անմրցելի գիններով և պայմաններով օժտուած է. կը կատարէ խառն ապահովագրութիւն, ընտանեկան, մանուկներու, եւն. եւն.:

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ
այաքիա, Տեօյլէ Օրիէնդ Պաքի կից. Սինասոն Խան. (2)




Կը գտնուի բոլոր
գեղադործներուն քով:
Թուրքիոյ ներկայա-
ցւոյիչ Ո. Սօլաքեանց.
Կ. Պոլիս:

ՀԱՅՈՒՇԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ, ԱՏԱԲԱՋԱՐ

Հայուհեաց Վարժարանի նպատակն է Հայ աղջիկներուն տալ լուրջ դաստիարակութիւն մը՝ զարգացած և բարեկիրթ տանտիկիներ և դաստիարակութեան գործին օժանդակներ պատրաստելու համար: Վարժարանին տեսչութիւնը աշակերտուհիներուն ֆիզիքական, իմացական և բարոյական զարգացումը միշտ խղճամիտ հոգածութեան աւարկայ կ'ընէ: Բնիկ և Ամերիկացի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը կ'աւանդէ Հայ., Անգլ., Թուրք. և Ֆրանս. լեզուները, ինչպէս նաև բնական, իմաստասիրական, չափական և ուրիշ գիտութիւններ: Մնայուն կարուհի մը կ'աւանդէ ձեռագիտութեան, կարի և ձեռագործի դասերը: Դիւերօթիկներու տարեթոշակն է 12 Օսմ. ոսկի, որուն կէսը պէտք է հատուցանել տարելջմանին սկիզբը և կէսը Ծնունդի արձակուրդին: Դաշնակի և երդեհոնի համար կը պահանջուի 5, 3 և 2 1/2 Օսմ. ոսկի, դասառութեան թիւին համեմատ: Վարժարանին յառաջիկայ տարելջմանը կը սկսի Սեպտ. 11ին (Ն. Տ.), Դշ. իրիկունը: Աւելի տեղկու-թեանց համար խնդրել վարժարանին Յայտագիրը կամ դիմել Մր. Բիթի, Պայպըլ Հաուս, Կ. Պոլիս, կամ գրել Տօքթ. Ս. Էֆ. Գալալճեանի, Ատե-նայեան Խնամակալութեան Ատաբաղար:

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնազին-
 ԲԵՐՍ., ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻՒ 12 տարար և երկար տարիներէ ի վեր
 կը դարմանէ ստամոքսի, աղիք-
 ներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւն-
 ները, հին և նոր դաղիական ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց
 ստամոքսի խանգարման և նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ մի-
 ջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Զորեքշաբթի
 օրերը միայն ձրի: (8—10)



Զեռֆի, ոսֆի ու ոսֆի եւ ձեռֆի
 միանգամայն վեհմաներ
 կը գտնուին:

Անկարելի է որ ընտանիք մը առանց
 կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն
 է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ
 լաւ մեքենայ մը անթիւ և անհամար
 ծառայութիւններ կը մատուցանէ, մինչ-
 դեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ
 դժգոհութեանց և տաղտուկի աղբիւր
 մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

մեքենան լաւագոյնն է. այս մեքենան
 ամէնէն աւելի կատարելագործուածը,
 հաստատունը և դիւրագործածելին ըլ-
 լալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն
 ոք Սինկերի մեքենաները կը դնէ:

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Բնկերութեան
 վաճառատուններուն մէջ:

ԿՊՇԱՐԹԱ ԱՆ
 ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|---------|---|
| ԿԱԼԱԹԱ. | 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, 343 և 343. |
| ՌԵՐՍ. | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ, |
| ՊՈԼԻՍ | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| ՍԵԻԻՏԱՐ | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| | 1. Սուլթան Համամ. |
| | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ. 13. |
| | Զարչը Պօլու, Թ. 120. |
| | Դատերը եւ նորոգութիւնները ձրի. |

կատարեալ երազիսւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր բաղաբներուն մէջ:

Սինկերի Բնկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ
 Փողոց, Թիւ. 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

ՄԱՍԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և գաւառներու համար տարեկան 60 ղըշ :
 Արտասահմանի » 14 ֆրանք :
 Թղթատարութեան ծախքը մեր վրայ :
 Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգեւները ,
 միշտ ձրիաբար , Թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :
 Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է :
 Զերտարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :
 Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

«ՄԱՍԻՍ»Ի Հասցէին

Գուրեւուլու խան, թիւ 7, Կալարա, Կ. ՊՈԼԻՍ

درعبد غلط قورسوتلی خانه نمره ۷ «ماسیسی» غزنسی اداره فانیسی

Rédaction de la Revue «MASSIS»

Nº. 7, Courchounlou Han, Galata.
 CONSTANTINOPLE

ՌՕՊԷՐԹ ԳՕԼԷՃ Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը
 կը սկսի Սեպտ. 5/18ին : Կարգադրութիւններ եղած են վաճառականա-
 կան ուսումը բաղձացուած կատարելութեամբ աւանդելու համար : Վար-
 ժարանիս մասնաւոր բժիշկը՝ ուսանողներուն առողջութեան , մարմնա-
 մարզներուն և խաղերուն , ինչպէս նաև վարժարանիս ընդհանուր առող-
 ջական վիճակին վրայ կը հսկէ : Մարմնամարզի նոր և գեղեցիկ շէնք
 մը կառուցուած է նորոգապէս , իր մէջ ունենալով մարմնամարզի ամէն
 տեսակ գործիքներ , վերջին դրութեանց համաձայն :

ԲԱՅԱՌԻԿ ԱՌԻԹ ՄԸ ԳՐԱՍԷՐՆԵՐՈՒՆ. — ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒ-
 ՆԷՆ : ՄԻԱՅՆ 20 ՂՐՈՒՇ ՓՈԽԱՆ 60 ՂՐՈՒՇԻ : — 1. Ասորա՝ լէպ. Բ.
 Սիլվա : Թրգ. Թէրզեան 10 : 2. Ասրիէն. վիպերդ. Բաղասաարեան 10 :
 3. Առողջապահութիւն. Տքթ. Փէշտիմալեան 2½ : 4. «Ենեշլէյնուլէ» .
 Տ. Սէթեան 5 : 5. Դիւրուսոյց Մեքոս Անզլ. Բեռականութեան. Ասա-
 սուրեան 15 : 6-7. Ամուսնական Խնդիրներ. 2 հատոր 2½ : 8. Սփո-
 փանք Ռանկին. Մ. Յովհաննէսեան 5 : 9. Ուղեցոյց Դրագիտութեան
 Թուրքերէն Լեզուի. Դալպեան 5 : 10. Պիւսաշոյցի. Լինհարտ Գեր-
 արուդ 5 : Այս 10 կտոր վիպական , առողջապահական , դրական , լեզ-
 ուբանական , բանաստեղծական և մանկավարժական գրքերը՝ որոնք 60
 զրուշ արժէք ունին , 20 զրուշի կը ծախուին Զարդարեան Եղբայրներուն
 Դրատունէն՝ Բերա , Դուլէ-Դարու թիւ 695 : Գաւառներու համար 7
 զրուշ աւելի : Դրասէրներ պէտք է փութան օգտուիլ այս առիթէն , դի-
 մելով վերեւի հասցէին , ուր կը ծախուին նաև ամէն տեսակ թուրքե-
 րէն , հայերէն և ֆրանսերէն նոր թէ՛ գործածուած գիրքեր , աժան և
 դիւրամատչելի գիներով :